14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 183 (4801)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Կբարելավվի՞ Հայաստանի տնտեսական մրցակցության դաշտը

Արսակ Շաբոյանը հավաստիացնում է, որ հետևողական են լինելու

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կառավարության երեկվա նիստը սկսվեց Հայաստանում տնտեսական մրցակցության խնդրի արծարծմամբ: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, հիշեցնելով, որ այս ոլորտում օրենսդրական փոփոխություններ են արվել եւ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին տրվել լրացուցիչ գործիքներ, հարց ուղղեց հանձնաժողովի նախագահ Արսակ Շաբոյանին, թե դրանք ի՞նչ փոփոխություններ են բերել մրցակցային դաշտում: Վարչապետը կարեւորեց այս հարցը, քանի որ մրցակցային դաշտի բարելավումը էական նշանակություն է ունենալու 2012-ի պետական բյուջեի ցուցանիշները կատարելու տեսանկյունից:

Պատասխանելով վարչապետի հարցադրմանը՝ **Արսակ Շաբոյանը** հայտնեց, որ հանձնաժողովը 2011-ի առաջին 9 ամիսների ընթացքում ուսումնասիրել է 13 պրակտիկային շուկաներ, որոնք ունեցել են կենտրոնացվածության բարձր աստիճան: *Տես էջ 2*

ՄԻՊ-ն ուղղում է իր սխալը

Երեկ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ՝ մարդու պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառած վնասի հատուցման վերաբերյալ հոդվածի սահմանադրականությունը որոշելու խնդրանքով:

Մինչ այդ էլ Կարեն Անդրեասյանն էմիսսիայի ժանրով լրագրողներին հաղորդակից էր դարձրել, թե օրենքի կիրառումից առաջացած դժգոհությունների վկայությամբ ինչպես այլ, այնպես էլ խոսքի ազատության ոլորտում անօրեն դատավորը վարկաբեկում է լավ օրենքն ու երկրի օրենսդրությունը, լավ դատավորին եւ դատական համակարգը, մեր իշխանության բոլոր թեւերին ու պետությանը: Եվ հանձն էր առել վերացնել անօրեն դատավորի գործոնը, թե՝ խոսքի ազատության պաշտպանության համար այսօր իրականում անհրաժեշտ է հանրային գործուն վերահսկողություն օրենքի կիրառման եւ արդարադատության նկատմամբ եւ այլ ֆլան-ֆսան: Եվ ապա վերը նշված ժանրով էլ տեղեկացրել էր լրագրողներին, թե «իմ համոզմունքներն ու մոտեցումները կարող են ընկալվել որպես օրենսդրական փոփոխության գաղափարն առաջարկողի կանխակալություն, ինչպես նաեւ հասկանալով այն պնդումը, որ օրենքի ներկայիս կիրառումը դատարանների կողմից պայմանավորված է օրենքի ոչ միանշանակ կարգավորումներով՝ որոշել եմ մեր այս մտահոգությունները փոխանցել ՀՀ Սահմանադրական դատարանի քննությանը«: Ճիշտն ասած՝ այս բոլորը ոչ այլ ինչ է, քան վկայություն հայաստանյան տխուր իրականության մասին, երբ ամեն մեկն այդ պահի շահերով ու նպատակահարմարությամբ է օրենք ձեւում- կարում՝ իր վրայով, իր օրվա խնդրին համապատասխան: Լրագրողներս պարզապես հիշում ենք, թե դեմքի ի՞նչ խելացի արտահայտությամբ էր իր իրավացիությունը պնդում Կ. Անդրեասյանը 2009, 2010 թվականներին, երբ առաջարկում էր Քրեական օրենսգրքից հաղորդակցական օրենսգիրք տանել զրպարտության եւ վիրավորանքի մասին դրույթները կամ պաշտպանում էր Ազգային ժողովում շրջանառվող նախագիծը:

Տես էջ 2

Երեւանում է Ադրբեջանի ՆԳ նախարարը

Երեւանում այսօր տեղի կունենա Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից պետությունների ներքին գործերի նախարարների խորհրդի հերթական նիստը, որին մասնակցելու համար երեկ Հայաստանի «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք է կատարել նախարարներին տեղափոխող օդանավը: Ոստիկանության լրատվական ծառայությունից տեղեկանում ենք, որ ԱՊՀ երկրների ներքին գործերի նախարարներին դիմավորել է Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը: Երեւան ժամանած պաշտոնյաների թվում է նաեւ Ադրբեջանի ներքին գործերի նախարար Ռամիլ Ուսուբովը:

Հոկտեմբերի 22-ին վերաօծվելու է Դիարբեքիրի Ս. Կիրակոս եկեղեցին

Եթե թուրքերն ու քրդերը համատեղ ջանքերով շավիրեին եկեղեցին, ապա թուրքահայությունը չէր կանգնի վերականգնման փաստի առջեւ

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օր չի լինում, որ թուրքական տպագիր եւ էլեկտրոնային մամուլում չհրապարակվեն հակահայկական նյութեր կամ հայերի նկատմամբ թուրքական իրականության մեջ տիրող ատելության եւ թշնամանքի մասին լուրեր: Դրա արդյունքը լինում է այն, որ ոմն թուրք վարորդ ոչ միայն ձեռք է բարձրացնում, այլեւ արյունլվիկ է անում մի կնոջ, իմանալով որ հայ է, հետեւաբար՝ «գյավուր», ուստի կարելի է բռնություն կիրառել նրա նկատմամբ:

Ի դեմ, ոչ մահմեդականների նկատմամբ թուրքական շատ ավանդական հանդուրժողականությունը դարեր շարունակ մեծահոգաբար հանդուրժել էր Օսմանյան կայսրությունում իրավազուրկ քրիստոնյայի դեմ կիրառվող ամեն տեսակի բռնություններն ու օրենքով խրախուսել:

Հակահայկական նյութերն ու հայերի նկատմամբ թշնամանք եւ ատելություն սերմանող լուրերն էլ այս վարորդի նման տականքներին են խրախուսում: Թշնամանքի եւ ատելության հիմքը, ինչ խոսք, կազմում են Թուրքիայում պետականորեն իրականացվող հայկական դավադրության որոնումները: Եթե նույնիսկ վարչապետ Էրդողանի կառավարությունն անկեղծ լինի ազգային փոքրամասնությունների պահանջներին ընդառաջելու հարցում, դատապարտելի այս իրողությունը, միեւնույնն է, մթագնում է նրա բոլոր ձեռնարկումները:

Հոկտեմբերի 12-ի համարում «**Ազգն**» անդրադարձել էր Ստամբուլում դաժան ծեծի ենթարկված հայ կնոջ միջադեպին: Երեկ «Հայթերթ» կայքէջն էլ ներկայացրել է Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցու վերականգնումը դատապարտող «diyarbakirsoz.com» էլեկտրոնային թերթի հրապարակումը:

Ահա թե ինչ է գրել.

«Ավարտվել են հայ համայնքի համար առնվազն Վանա լճի Ափդամար (Աղթամար Սուրբ Խաչ) եկեղեցու չափ կարեւոր նշանակություն ունեցող Սուրբ Կիրակոս եկեղեցու վերականգնման աշխատանքները, որոնց համար ծախսվել է 3 մլն 400 հազար լիրա:

Դիարբեքիրում բնակչության 99 տոկոսը մահմեդական է: Չնայած դրան, «խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության ներկայացուցիչներից կազմված խաղաղարարությունը ոչ մի մզկիթ չի կառուցում, ընդ որում՝ իմանալով, որ բազմաթիվ թաղամասերում կա դրա կարիքը: Բայց, երբ խոսքը վերաբերում է եկեղեցուն կամ ալավիների աղոթարաններին, խակի բերանը առանց երկմտելու շոյլորեն բացում են:

Ստացած տեղեկությունների համաձայն, Դիարբեքիրի խաղաղարարանի աջակցությամբ վերականգնված Սուրբ Կիրակոս եկեղեցին վերաօծվելու է հոկտեմբերի 22-ին: Երեք տարի առաջ եկեղեցու համանուն հիմնադրամը վերականգնման համար դիմել էր մշակույթի եւ զբոսաշրջության նախարարություն: Սակայն նախարարությունից ստանալով «եթե մենք վերականգնենք, ապա թանգարանի ենք վերածելու» պատասխանը, անհրաժեշտ գումարը հայթայթելու համար միջոցառումներ էր կազմակերպել, բայց ապարդյուն: Տեսնելով, որ գործը գլուխ չի գալիս, Դիարբեքիրի խաղաղարարանն իսկույն 1 մլն դոլար է հատկացրել:

Ի դեմ, խաղաղում երկու ձեռքի մատների չափ ծխական ունեցող կրոնների աղոթարաններին միլիոնավոր դոլարներ հատկացնող Դիարբեքիրի խաղաղարարանը ոչ միայն մզկիթ չի կառուցում, այլեւ չի էլ թողնում, որ բնակչությունն ինքը կառուցի:

Թուրքիայի հայերի պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանն ասում է. «Վանա լճի Ափդամար կղզու եկեղեցու սեփականատերը մենք չենք, բայց այս եկեղեցու սեփականության վկայականը մեր ձեռքում է: Այսինքն՝ մեզ է պատկանում, թերեւս դրանով էլ կարեւորվում է»:

Ծնունդով դիարբեքիրցի Արամ արք. Աթեշյանի խոսքերով, եկեղեցին օծվելու է հոկտեմբերի 22-ին, իսկ հոկտեմբերի 23-ին այնտեղ պատարագ է մատուցվելու»:

Նախ պետք է ասել, որ Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին ժամանակակից Թուրքիայի ասիական հատվածում գոյություն ունեցող հայկական այն 2500 եկեղեցիներից է, որոնք մինչեւ 1915-ի ցեղասպանությունը գործում էին, հետեւաբար եւ կանգուն էին: Այս եկեղեցիները հատուկենս բացառությամբ անհետացել են՝ ենթարկվելով հիմնահատակ ավերման: Իսկ Սուրբ Կիրակոսը թեկուզ ավերված, բայց եւ այնպես պահպանվել է: Եթե նույնիսկ եկեղեցին վերականգներ թուրքական պետությունը, միեւնույնն է, հայերին շնորհ չէր անելու, այլ պարզապես վերացնելու էր թուրքերի եւ քրդերի համատեղ վայրագության հետքը, այն էլ՝ ընդամենը մեկ եկեղեցու պարագայում միայն:

Դիարբեքիրի խաղաղարարանը, մասնակցելով Սուրբ Կիրակոս եկեղեցու վերականգնմանը, մասնակի նպաստել է այդ հետքի վերացմանը, սակայն դա ամբողջությամբ վերացվել է եկեղեցու համանուն հիմնադրամի, թուրքահայ համայնքի եւ սփյուռքահայերի միջոցներով: Ակնհայտ է, որ թուրքերն ու քրդերը չավիրեին Սուրբ Կիրակոսը, ապա հայերը իրենց իսկ կառուցած եկեղեցին վերականգնելու փաստի առջեւ չէին կանգնի:

Սորոսը եւ 95 «մտահոգ եվրոպացիներ» առաջարկեցին եվրոգոտու փրկության միջոցներ

Ամերիկացի միլիարդատեր Ջորջ Սորոսը եւ Եվրամիության 95 նախկին պաշտոնյաներ «Ֆայնենշլ թայմս» թերթում բաց նամակով դիմել են եվրոգոտու երկրների իշխանություններին, հայտարարելով, որ պարտքային ճգնաժամը պետք է հաղթահարվի ամենամոտ ժամանակներս, այլապես կարող է հանգեցնել «ընդհանուր ֆինանսական համակարգի փլուզմանը»: Նամակի հեղինակները նշում են, որ «ներկայումս ձեռնարկվող միջոցները խիստ աննշան են եւ ժամանակավրեպ, մեծացնում են ընդհանուր ֆինանսական փլուզման վտանգը»: Բացի դրանից, բաց նամակում ասվում է, որ «եվրոգոտու համակարգը հեռու է կատարելությունից»:

ԵՄ 95 նախկին պաշտոնյաները իրենց անվանում են «մտահոգ եվրոպացիներ»: Սորոսի այդ գաղափարակիցները խաղաղական գործիչներ են եւ տնտեսագետներ: Նրանց թվում են մասնավորապես Գերմանիայի ֆինանսների նախկին նախարար Հանս Էյխելը, Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Բեռնար Կուշները եւ ուրիշներ:

Երկուշաբթի օրը Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին խոստացան մինչեւ հոկտեմբերի վերջը նախապատրաստել Եվրոպայի փրկության նոր ծրագիր, իսկ հետո նաեւ վերանայել Եվրամիության հիմքում ընկած փաստաթղթերը: Միջոցառումների հանգամանալի փաթեթը ենթարկման կդրվի «Մեծ խանյակի» նոյեմբերյան գագաթաժողովում եւ կներառի արժութային դաշինքի կայունացման, ինչպես նաեւ ֆինանսավարկային կառույցների աջակցման գործողություններ:

Ինչ վերաբերում է Սորոսի ծրագրին, նա ԵՄ իշխանություններին արդեն առաջարկել է ճգնաժամից դուրս գալու իր ծրագիրը, որը հիմնվում է երեք գլխավոր կետերի վրա: Առաջինն այն է, որ եվրոգոտու երկրների կառավարությունները պարտավոր են սկզբունքային համաձայնության հասնել եվրոգոտու ֆինանսների ընդհանուր նախարարության ստեղծման վերաբերյալ: Երկրորդ կետը պահանջում է «խոշոր բանկերը Եվրոպայի Կենտրոնական բանկի կառավարմանը հանձնել ժամանակավոր երաշխիքների եւ մշտական վերակապիտալացման դիմաց»: Երրորդ կետի համաձայն, Եվրոպայի Կենտրոնական բանկը, օրինակ, Իտալիային եւ Իսպանիային պետք է թույլ տա ժամանակավորապես վերաֆինանսավորելու իրենց պարտքերը նվազագույն տոկոսներով:

«Այդ քայլերը կհանդարտեցնեն շուկաները եւ Եվրոպային ժամանակ կտան ածի ռազմավարություն մշակելու համար, առանց որի անհնար է լուծել պարտքերի խնդիրը», նշում է Սորոսը:

ՇՐՐԱԿ

«Արփի լիճ» ազգային պարկում կկրկնվի՞ Սեւանի ափամերձ հասվածների կառուցապատման պատմությունը

ՀՀ կառավարությունում հաստատելու պատրաստվող՝ «Արփի լիճ» ազգային պարկի 2011-2015 թթ. կառավարման պլանը, որի գոտեւորման սխեման կազմված է այնքան անհեռատես եւ անտրամաբան ձեւով, հաստատ չի կարողանա ծառայել որպես պարկի տարածքի էկոհամակարգի պահպանության եւ կառավարման արդյունավետ գործիք: Գյումրու «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի կայքէջի փոխանցմամբ՝ նման կարծիք է հայտնել տեղի «Օրհուս» կենտրոնի համադասող **Գեւորգ Պետրոսյանը**:

Եթե ուշադրություն դարձնենք արգելոցային գոտու տարածքին, նշել է Պետրոսյանը, ապա կտեսնենք, որ այնտեղ ընդգրկված են Դարին-Դարա արոտավայրային զանգվածի սահմանամերձ հատվածը, Քարախաչը եւ Եղնախաղի լեռնաշղթայի մի հատվածը, Արփի լճի կղզիները եւ Ախուրյան գետի հարակից տարածքի մի փոքր հատվածը: Դրանք, որոշ բացառություններով, այն տարածքներն են, որոնք առանց ազգային պարկի էլ պաշտպանված են եւ գրեթե պաշտպանության կարիք չունեն: Բուն Արփի լճի շուրջբոլորը տնտեսական գոտի է, անտառապատ հատվածները՝ ռեկրեացիոն գոտի եւ ահագին հատվածը պահպանման գոտի (նշված է այս բառով, որ մեզ թվա, թե կապ ունի պահպանության հետ, բայց ընդամենը նկատի ունեն բուֆերային գոտին, ասում է Գ. Պետրոսյանը): Բնապահպանի մտահոգությունը սրանից արած այն հետեւությունն է, որ վաղը «Արփի լիճ» ազգային պարկում կրկնվելու է Սեւանա լճի ափամերձ հատվածների կառուցապատման պատմությունը, որը հանգեցնելու է այս լճի էկոհամակարգի, պարկի տարածքում ներկայացված լանդշաֆտների, բուսաշխարհի ու կենդանական աշխարհի բազմազանության ոչ թե պահպանությանը, այլ քայքայմանն ու ոչնչացմանը:

«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման նպատակներից մեկը,- ի հավելումն ասաց մեզ Գյումրու բնապահպանական տեղեկատվության «Օրհուս» հասարակական կենտրոնի ղեկավարը,- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումն է նաեւ, բայց դրա ստեղծման ընթացքն ու գործելակերպն այլ բան են ասում: Նույնիսկ ազգային պարկի գործունեությունն ապահովելու համար նախատեսված շինությունը կառուցվեց ոչ թե տարածաշրջանի որեւէ գյուղական համայնքում, այլ ընդհուպ Արփի լճի ափին, ինչը ոչ մի տրամաբանական բացատրության ենթակա չէ»:

Գ. Մ.

Կբարելավվի՞ Հայաստանի տնտեսական մրցակցության դաշտը

1-ին էջից

Դրանք են ձվի, սուրճի, կարագի, ցեմենտի, գաջի, տարբեր տեսակի շինանյութերի, ինչպես նաեւ պարարտանյութերի շուկաները: Ըստ հանձնաժողովի նախագահի, «այս տարվա 9 ամիսների ընթացքում մեզ հաջողվել է բացահայտել բազմաթիվ խնդիրներ»: 86 որոշում է կայացվել խախտումների վերաբերյալ, իսկ նախորդ տարիներին այդ թիվը չէր գերազանցում 30-ը: Այդ նույն ժամանակահատվածում տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային գործողությունների համար տուգանվել են մոտ 230 մլն դրամի չափով՝ 2010-ի՝ 37 մլն դրամի, 2009-ի 10 մլն դրամի եւ 2008-ի 9 մլն դրամի համեմատ: Տուգանքի ենթարկվածներից գանձումների չափը մոտ 150 միլիոն դրամ է:

Ըստ Արտակ Շաբոյանի, հանձնաժողովի հիմնական թիրախը խոշոր տնտեսվարող սուբյեկտներն են եւ նրանց հակամրցակցային գործողությունները: «Այն շուկաներում, որտեղ մենք գործողություններ ենք իրականացրել եւ սահմանել պատասխանատվության միջոցներ, այդ խախտումները հիմնականում վերացված են», հավատացրեց նա:

«2012 թվականին ինչպիսի՞ հրավիճակ է լինելու ձվի, կաթի, կարագի, ձեթի, պանրի, կաթնամթերքի շուկաներում, որոնց առնչվում է մեր բնակչության մեծ մասը»՝ Տիգրան Սարգսյանի տված հարցին պատասխանելով, Արտակ Շաբոյանն ասաց, որ այդ շուկաներն այս տարվա ընթացքում ուսումնասիրվել են, մի մասի առումով պատասխանատվության միջոցներ ենք կիրառել, հարուցվել են վարչական վարույթներ: «Այդ շուկաները գտնվում են մեր ամենօրյա հսկողության ներքո, երկու օրը մեկ իրականացնում ենք դիտանցումներ եւ գնային չարաշահումների եւ մնացած այլ խնդիրների հետ կապված: Եթե 2012-ին լինեն չարաշահումներ, մենք կրկին լինելու ենք հետեւողական եւ անկախ նրանից, թե այս տարի ինչպիսի միջոցառումներ ենք իրականացրել չարաշահումների կապակցությամբ, տնտեսվարող սուբյեկտներին կրկին ենթարկելու ենք պատասխանատվության», նշեց հանձնաժողովի նախագահը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանն էլ պատրաստակամություն հայտնեց նոր լծակներ եւս տրամադրել, «եթե տեսնենք, որ այն գործիքները, որոնք ձեզ տվել ենք, ծառայում են բուն նպատակին, այսինքն՝ մրցակցային միջավայրը Հայաստանի Հանրապետությունում բարելավվում է»:

Արտակ Շաբոյանը վերոնշյալ ցուցանիշներին անդրադարձավ նաեւ կառավարության նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ: Պատասխանելով լրագրողների հարցերին՝ նա տեղեկացրեց, որ շաբավազի հումքի գինը համապատասխանում է միջազգային շուկայում գների փոփոխությանը: Ինչ վերաբերում է այս շուկայի մենաշնորհ ունեցող «Ալեխ գրիգ» ընկերությանը, ապա հանձնաժողովի նախագահը հայտնեց, որ անցյալ տարի այս ընկերությունը 10 անգամ տուգանվել է մեկ այլ՝ օդիների հետ կապված անբարեխիղճ մրցակցության համար: Բոլոր դեպքերում ընկերությունը հանձնաժողովի վճիռները բողոքարկել է դատարանում: Դրանց վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մնացել են ուժի մեջ, իսկ 3 բողոք դեռ քննարկվում է:

Խոսելով կարագի շուկայում վերջերս բացահայտված խախտումների մասին՝ Արտակ Շաբոյանը տեղեկացրեց, որ այդ շուկայում կան 10 ընկերություններ, որոնց մի մասը, ներմուծելով սփրեդ, այն վաճառել է որպես կարագ, մյուս դեպքերում էլ խանութներն են մատակարարված սփրեդը վաճառել որպես կարագ:

20 մլն եվրո՝ փոքր համայնքների ջրամատակարարման բարելավմանը

Հայաստանի Հանրապետությունը 20 մլն եվրո է ստացել երեք միջազգային կառույցներից՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկից, Եվրոպական ներդրումային բանկից եւ Եվրոմիությունից՝ Տավուշի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի 20 բնակավայրերի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման, ինչպես նաեւ Դիլիջան եւ Ջերմուկ քաղաքներում կոյուղու վերականգնման համար: Այդ մասին կառավարության նիստում ասաց ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանը: Նա նաեւ նշեց, որ այս գումարի մի մասը դրամաշնորհ է, որը հատկացվելու է տեխնիկական օժանդակության համար: «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր» անվանումը ստացած այս վարկային համաձայնագիրը երեկ արժանացավ կառավարության հավանությանը:

Ա. Մ.

ՄԻՊ-ն ուղղում է իր սխալը

1-ին էջից

Ինչպես էր հակադարձում լրագրողներին ու լրագրողական կազմակերպությունների ղեկավարներին, որոնք այն բոլորը, ինչ նա հիմա է տեսնում եւ ասում, այն ժամանակ էին նրան ասում, զգուշացնում էին, որ օլիգարխները սնանկացնելու են թերթերին, որ միլիոնավոր դրամների պահանջով դատական հայցերը խոսքի ազատությանն ուղղված վտանգ են լինելու, իսկ մի քանի անգամ էլ մեր թերթի խմբագիրն ասաց, թե կգերադասի բանտում նստել, քան տուգանք վճարելով թերթը սնանկացնել: Եվ մեր կարծիքով հիմա բոլորովին էլ սխալի կեսից հետ դառնալու ժողովրդական իմաստությունը չի գործում ՄԻՊ-ի պարագայում, ուղղակի ի պաշտոնե, թեկուզ սեփական սխալն ուղղելու ճանապարհով մեր պաշտպանն ուզում է սեփական վարկանիշը բարձրացնել: Մանավանդ՝ ՄԻՊ-ի հայցը փաստորեն, լրագրողներին ուղղած նրա բացատրության վրա եթե հիմնվենք, պետք է ուղղված լիներ ոչ թե քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթների սահմանադրությանը չհամապատասխանելը ճնշելուն, այլ՝ դատավորների վճիռները: Դատավորներին նա լավ ու վատի էր բաժանում, կարծես թե մեր դատավորները առանց հրահանգի որեւէ վճիռ կայացնելու «դուխ» ունեն: Մինչդեռ այդպիսի բովանդակությամբ հայց ՍԴ ներկայացնել պաշտպանը չէր կարող, օրենսդրորեն հնարավոր չէ, այնպես որ թույլ տվեք չհավատալ ՄԻՊ-ի անկեղծությանը, մանավանդ Սահմանադրական դատարանը օրենքի՝ սահմանադրությանը համապատասխան լինելն է նայելու, ինչպես ՄԻՊ-ն է հայցել, եւ ոչ թե դատավորների վճիռները: Մխիթարականը միայն այն է, որ ՍԴ-ի վճռից հետո թերթերն իրոք կարող են դուրս գալ անհեթեթ վիճակից:

Մ. Խ.

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏ

Առայժմ չկա որոշում սողանքից տուժածների հատուցման վերաբերյալ

Տավուշի մարզում սողանքի հետեւանքով կորածների դիակները հանվեցին հողի տակից ու հանձնվեցին հարազատներին: Սակայն մինչ այսօր դեռ որեւէ որոշում չի կայացվել, թե ով եւ որքան փոխհատուցում պետք է հատկացնի տուժած ընտանիքներին եւ զոհվածների հա-

րազատներին: Արդեն կառավարության երկու հերթական նիստ է գումարվել, սակայն փոխհատուցման մասին տիրում է քար լռություն:

«Ազգը» կառավարության նիստից հետո փորձեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանից տեղեկանալ, թե երբ եւ որքան է լինելու փոխհատուցումը: «Սողանքի հետեւանքով մահացածների հարազատներին աջակցությունը կլինի միայն այն դեպքում, ասաց նախարարը, եթե կառավարությունը համապատասխան որոշում կայացնի: Իսկ եթե մահացածների թվում լինեն սոցիալապես անապահովներ, ապա նրանց կտրվի համապատասխան օրենքով սահմանված փոխհատուցում»: Իսկ թե ո՞ր նախարարությունն է այդ խնդրով զբաղվում՝ նախարարը տեղյակ չէր եւ խոստացավ ճշտել:

Մինչ նախարարը կճշտի, հուսանք, որ կառավարությունը արագ որոշում կկայացնի այս դեպքի առիթով, քանզի այն բնական աղետ է, եւ նման դեպքերում գործում է արտակարգ իրավիճակների մասին համապատասխան օրենքը:

ՄԱԲԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հայաստանում կանցկացվի ԱՊՀ երկրների երիտասարդ աստղագետների կոնֆերանս

Նոյեմբերի 21-25-ը Երեւանում տեղի կունենա ԱՊՀ երկրների ուսանողների եւ երիտասարդ գիտնականների կոնֆերանս «Երկնի իրական եւ վիրտուալ ուսումնասիրություններ» թեմայով, կքննարկվեն ինչպես աստղագիտական նորագույն արդյունքներն ու տվյալները, այնպես էլ շրջահայությունները, տվյալների շտեմարանները եւ վիրտուալ աստղադիտարանները: Կոնֆերանսը կազմակերպվում է առաջին տիեզերական թռիչքի 50-ամյա միջոցառումների շրջանակներում, ինչպես արդեն հայտարարվել էր: Կոնֆերանսին կմասնակցեն Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի եւ Վրաստանի 50 ուսանողներ եւ երիտասարդ գիտնականներ, ինչպես նաեւ եվրոպացի եւ ռուս դասախոսներ, որոնք կկարդան հրավիրված դասախոսություններ: Ուսանողները ելույթ կունենան իրենց մագիստրոսական կամ թեկնածուական թեզերի եւ հետազոտությունների թեմաներով: Կանցկացվեն նաեւ գործնական պարապմունքներ, կկազմակերպվի այցելություն Բյուրականի աստղադիտարան: Պաշտոնական լեզուներն են անգլերենը եւ ռուսերենը: Կոնֆերանսը ֆինանսավորվում է ռուս-հայկական համագործակցության հիմնադրամի կողմից:

1200 հայ շահել է «գրին քարդ»

2011-ին ԱՄՆ-ի իրականացրած «գրին քարդի» վիճակահանությանը շահել է 1200 հայաստանցի: 2012 թ. անցկացված վիճակախաղով հայաստանցի շահողների թիվը 1000-ն է: Հայաստանում ԱՄՆ հյուպատոս Ռոբերտ Ֆարքուարը երեկ կայացած հանդիպմանը շեշտել է, որ այս ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանում ակնհայտ առաջատար է: 2011-ին Վրաստանից «գրին քարդ» է շահել 700, Ադրբեջանից՝ 350, Ռուսաստանից՝ 2400 մարդ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Կարգավորման երեք սկզբունքները ոչ թե մենյու են, որ ով ինչ ուզենա՝ ընտրի, այլ մեկ ամբողջություն

ԲՈՏՈՆԵՐ

ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավար Արամ Սաֆարյանը երեկ հեռակա շնորհակալություն հայտնեց ԵԱՀԿ նախագահողի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրչիկին՝ «1996 թվականից մինչեւ այսօր Ղարաբաղյան հակամարտության գոտում իր գործած օբյեկտիվ, ազնիվ եւ նվիրված առաքելության համար: Ա. Կասպրչիկը, հավասարապես, ինչպես Մինսկի խմբի համանախագահները, ոչ մի բառ չի ասել, որ կարող էր սրել իրավիճակը, անհավասար վերաբերմունք առաջացնել, բայց միաժամանակ տվել է իր օբյեկտիվ գնահատականը հրադադարի պահպանման ռեժիմի հետ կապված պրոբլեմների հարցում»: Այս դիտարկման տեղը Հայաստանի Ազգային ժողովն էր, որտեղ հոկտեմբերի 7-11-ը խորվաթիայի Դուբրովնիկ քաղաքում ԵԱՀԿ ԽՎ-ի նստաշրջանին մասնակցած Հայաստանի պատվիրակությունը երեկ ասուլիս էր տալիս:

Պատվիրակության ղեկավար Ա. Սաֆարյանը պատմեց, որ նստաշրջանի ավարտին տեղի է ունեցել քննարկում-շնորհանդես՝ նվիրված ԵԱՀԿ դերակատարությանը ԼՂ կարգավորման գործընթացում: Այս քննարկմանը ԵԱՀԿ անդամ 56 երկրից 100 պատվիրակ է մասնակցել: Քննարումը վարել է ԼՂ հակամարտության գծով ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահի անձնական ներկայացուցիչ Ժոան Սուարեսը, այդ քննարկմանը ելույթներ են ունեցել Մինսկի խմբի համանախագահներն ու ԵԱՀԿ նախագահողի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրչիկը, ինչպես նաեւ մեր պատվիրակության ղեկավար Արամ Սաֆարյանը՝ ներկայացնելով ԼՂ կարգավորման վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումը: Ա. Սաֆարյանը նշեց, թե ելույթ ունեցողների մեծ մասը կառուցողական մոտեցումներ է հանդես բերել եւ մնացել հիմնականում կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ մոտեցումների շրջանակում՝ ի բացառյալ 3-4 անհավասարակշիռ ելույթների: Մի շարք առաջարկներ են հնչել, այդ թվում՝ կարգավորման գործընթացում ԵԱՀԿ ԽՎ-ի մասնակցությունը մեծացնելու ուղղությամբ: Ա. Սաֆարյանը տեղեկացրեց, որ շուտով ԼՂ կարգավորման գծով ԵԱՀԿ ԽՎ նախագահի անձնական ներկայացուցիչ Ժոան Սուարեսը կժամանի տարածաշրջան: Ա. Սաֆարյանին եւ Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Բահար Մուրադովային նստաշրջանի նախօրեին Սուարեսը հրավիրած է եղել իր մոտ եւ հատկապես զարգացրել այն միտքը, որ կողմերի խորհրդարանները պետք է ակտիվանան եւ օգնեն անհրաժեշտ խաղաղ մթնոլորտի ձեւավորմանը:

Պատվիրակության անդամ, ՀՀԿական Արսակ Դավթյանը հատկապես հիշեց ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեի ելույթի այն հատվածը, ուր նա նշել է, թե սեղանի վրա գտնվող երեք սկզբունքները ոչ թե մենյու են, որ ով ինչ ուզենա՝ ընտրի, այլ մեկ ամբողջություն, բացի դրանից՝ Բրադկեն հարցի տեղափոխումը Մինսկի խմբից այլ ձեւաչափեր անընդունելի է համարել: Արսակ Դավթյանի տպավորությամբ՝ պատվիրակները համահունչ են տեսել մեր երկրի եւ Մինսկի խմբի համանախագահների պատկերացումները ղարաբաղյան լուծման վերաբերյալ, իսկ պատվիրակության մյուս անդամի՝ Խաչիկ Հարությունյանի տպավորությամբ՝ պատվիրակները համոզմունք են ունեցել, որ հակամարտության կարգավորմանը խոչընդոտում է Ադրբեջանը:

Համանախագահների ելույթները գնահատելիս մերոնք մի շարք այլ հետաքրքրական մանրամասներ եւս փոխանցեցին. ֆրանսիացի համանախագահ Բ. Ֆասիեի ակտիվությունը (Սարկոզին էլ այդ օրերին տարածաշրջանում էր) հասկանալի է եղել, նա նշել է, որ կողմերին առաջարկված հիմնարար սկզբունքների շուրջը ընդհանուր համաձայնություն ձեռք բերելու հարցում մի քանի անգամ համաձայնության հնարավորություն է եղել, բայց դրան խոչընդոտել է կողմերից մեկը (հասկանալի է՝ ով): Մինչդեռ, ըստ Ֆասիեի, ստատուս քվոն պահպանելը խաղաղության գրավական չէ, իսկ Բաքուն էլ ստատուսը եւ ժողովրդագրորեն է ուզում առաջ անցնել Հայաստանից, բայց ժամանակ շահելը ճանապարհ չէ: Ի դեպ, ըստ Ֆասիեի, նաեւ Հայաստանն է ուզում ժամանակ շահել, որպեսզի այլ պետություններ ճանաչեն ԼՂ անկախությունը:

Ա. Սաֆարյանի եւ Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Բահար Մուրադովայի ելույթները համեմատական առումով եւս հետաքրքրություն են ներկայացրել. Մուրադովան այլեւս չի խոսել Ադրբեջանի տարածքի 20 տոկոսի գրավումից եւ 1 մլն փախստական ադրբեջանցիներից, քանի որ ԵԱՀԿ ԽՎ-ն այն ամբիոնն է, ուր անմիջապես կհակադարձեին այդ ստերին, մինչդեռ Ա. Սաֆարյանը նշել է ԼՂՀ տարածքի 15 տոկոսի օկուպացման եւ Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների վերադառնալու իրավունքի մասին, որին Բաքուն խոչընդոտում է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ավանդույթներ

Ասիայի գիտնականները հայկական հանդեսում

Լույս է տեսել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մանկավարժության եւ հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդեսի 2011 թվականի երկրորդ ժողովածուն: Այն միջազգային գիտական հանդես է, որի խմբագրական խորհրդի նախագահն է ՀՊՄՀ-ի խորհրդի նախագահ, տնտեսագիտության թեկնածու, Տնտեսագիտական համալսարանի պատվավոր դոկտոր, հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Գիտական հանդեսը միտված է նպաստելու ՀՀ-ում բարձրագույն մանկավարժական կրթական համակարգի բարելավմանը եւ առաջընթացին: Պարբերականում զետեղված են գիտատեսական եւ գիտամեթոդական բնույթի հոդվածներ, որոնք օժանդակում են մանկավարժության եւ հոգեբանության բնագավառների առջեւ ծառացած խնդիրների լուծմանը, կրթության կառավարման հիմնախնդիրների լուսաբանմանը, համաշխարհային փորձի ուսումնասիրմանը եւ միջազգային կրթական գործընթացների առաջադրած դրույթների համակարգված եւ միասնական ներդրմանը:

Հանդեսում տեղ են գտել հայ եւ արտասահմանցի մասնագետների հրապարակումներ, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանի, ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիսա Դոլուխանյանի, Աբերդինի համալսարանի սոցիալական եւ ներառական կրթության ամբիոնի պրոֆեսոր Մարտին Ռուզի, Բելգորոդի պետական ազգային հետազոտությունների համալսարանի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Իրինա Իգնատովայի, Բելգորոդի պետական ազգային հետազոտությունների համալսարանի պրոֆեսոր Լիլիա Պետրովայի, Վրաստանի ԳԱԱ թղթակից անդամ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Դ.Ն.Ուզնաձեի հոգեբանության ինստիտուտի տնօրեն Իրակլի Իմեդաձեի, Սանկտ Պետերբուրգի Ա.Ի.Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր Վալերի Եֆրեմովի, Քենթբերի «Քրիստոսի եկեղեցի» համալսարանական քոլեջի պրոֆեսոր Թերենսե Քլիֆորդ-Ամոսի, ԱՄՆ-ի (Մասաչուսեթս, Բոստոն) Հյուսիսարեւելյան համալսարանի սոցիոլոգիայի եւ մարդաբանության պրոֆեսոր Թոմաս Քենիգի եւ այլ հեղինակների գիտական հոդվածներ:

Գիտական հանդեսը նախատեսված է մանկավարժների, հոգեբանների, բարձրագույն կրթության համակարգում աշխատողների եւ առհասարակ մանկավարժա-հոգեբանական գիտությունների զարգացմամբ շահագրգիռ յուրաքանչյուրի համար:

ՀԱՅՈՐԴ ՏԱՐԻ

2012 թ. Հայաստանում կանցկացվեն ՀԱՊԿ օդերաթիվ արձագանման հավաքական ուժերի զորավարժություններ

ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանն** ընդունել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալ **Վալերի Սեմերիկովին**:

Հանդիպման ընթացքում քննարկվել է 2011 թ. օգոստոսի 12-ին Աստանայում կայացած ՀԱՊԿ անդամ-պետությունների նախագահների ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքը: Այդ նպատակով երեք սեկցիոն նիստերով հոկտեմբերի 17-ին Մոսկվայում կազմակերպվելու են անվտանգության խորհուրդների քարտուղարների տեղակալների, արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների տեղակալների խորհրդատվություններ եւ քննարկումներ՝ ըստ գործունեության ուղղությունների:

Կողմերը քննարկել են նաեւ ս.թ. հոկտեմբերի 6-ին Ղրղզստանի Հանրապետությունում կայացած՝ ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջոցեսական հանձնաժողովի հերթական նիստի արդյունքները: Նիստի ընթացքում քննարկվել են միջոցեսական ռազմատնտեսական համագործակցության խթանմանն ուղղված հարցերի լայն շրջանակ:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել նոյեմբեր ամսին Երեւանում կազմակերպել հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության զարգացման նպատակով աշխատաժողով:

Քննարկվել են նաեւ 2012 թ. Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվելիք ՀԱՊԿ օդերաթիվ արձագանման հավաքական ուժերի զորավարժության կազմակերպման հարցեր: Վ. Սեմերիկովը նշել է, ՀԱՊԿ քարտուղարությունը պատրաստակամ է ըստ ամենայնի աջակցել հայկական կողմին զորավարժության կազմակերպման ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում նաեւ Հայաստան գործուղելով համապատասխան աշխատակիցների: Արթուր Բաղդասարյանն ընդգծել է ՀԱՊԿ օդերաթիվ արձագանման հավաքական ուժերի կազմի մեջ մտնող բոլոր բաղադրիչների՝ զորակազմերի, ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների ստորաբաժանումների լիարժեք ներգրավման անհրաժեշտության կարեւորությունը՝ զորավարժության նախապատրաստման աշխատանքներին առավել արդյունավետ ընթացք հաղորդելու նպատակով: Զորավարժությունն ընդգրված է 2012 թ. աշխատանքային պլաններում եւ կազմակերպվելու է Հավաքական անվտանգության պայմանագրի 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում:

Արման Կիրակոսյանը՝ Ավստրիայում Հայաստանի նոր դեսպան

Արման Կիրակոսյան

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով Աշոտ Հովակիմյանն ազատվել է Ավստրիայի, Հունգարիայի եւ Սլովակիայի Հանրապետություններում Հայաստանի դեսպանի, ինչպես նաեւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունում Հայաստանի առաքելության ղեկավարի պարտականություններից:

Ավստրիայում դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ դեսպան Աշոտ Հովակիմյանը, ըստ ԱԳՆ հաղորդագրության, մի շարք հանդիպումներ է ունեցել Ավստրիայի դաշնային նախագահ Հայնց Ֆիշերի, նախագահի եվրոպական եւ միջազգային հարցերով խորհրդական, դեսպան Հելմուտ Ֆրոյդենշուսի, Ավստրիայի եվրոպական եւ միջազգային հարցերի դաշնային նախարարության պետական քարտուղար Վոլֆգանգ Վալդների, գլխավոր քարտուղար Յոհաննես Կիրլեի եւ քաղաքական տնօրենի պաշտոնակատար Ֆրանց Յոզեֆ Կուգլիչի հետ:

Ավստրիայի դաշնային նախագահի հետ հանդիպման ժամանակ Հայնց Ֆիշերը գոհունակություն է հայտնել հայ-ավստրիական հարաբերությունների վերջին տարիների զարգացման առնչությամբ՝ նշելով, որ Ավստրիայի հետաքրքրությունը սեւծովյան եւ հարավկովկասյան տարածաշրջանում աճում է, ընդ որում՝ ոչ միայն տնտեսական բնագավառում, այլեւ հաշվի առնելով ԵՄ Արեւելյան գործընկերության ծրագիրը հարավկովկասյան տարածաշրջանում կայունություն ապահովելու տեսանկյունից:

Նախագահ Սարգսյանի մեկ այլ հրամանագրով Արման Կիրակոսյանը նշանակվել է Ավստրիայում Հայաստանի դեսպան՝ համատեղությամբ նշանակվելով նաեւ ԵԱՀԿ-ում Հայաստանի Հանրապետության առաքելության ղեկավար (նստավայրը՝ Վիեննա):

Հունաստանում, ապա նաեւ համատեղությամբ Խորվաթիայում, Կիպրոսում, Սլովենիայում, Հարավսլավիայում, Ալբանիայում, այդուհետեւ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանի պարտականություններն իրականացրած Կիրակոսյանը 2005-ից Հայաստանի փոխարտգործնախարարն էր:

Այդուհանդերձ, չնայած բոլոր պաշտոնական հաղորդագրություններն այս փոփոխությունների մասին տեղեկացրել են հոկտեմբերի 13-ին, ըստ ԱԳՆ հաղորդագրության, Կիրակոսյանը Ավստրիայում դեսպան է նշանակվել Հայաստանի նախագահի հոկտեմբերի 11-ի հրամանագրով:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին

Պարոն նախագահ.

Մոսկովյան թերթերից մեկը կանոնավոր կերպով իր էջերում կենսահարույց տարբեր հարցերով նամակներ է հղում երկրի ղեկավարներին: Ես չգիտեմ՝ կարդո՞ւմ են Կրեմլում դժգոհության այդ գավոր դրսեւորումները: Անձամբ ես երբեմ չեմ մտածել լրագրողական այդ ժանրի մասին, սակայն վերջերս, լինելով իմ փոքր հայրենիքում՝ Տավուշի մարզի նախկին Շամշադինի շրջանի սահմանամերձ գյուղերում, որոշեցի դիմել Ձեզ ինձ համակած մռայլ զգացումների կարգացությամբ: Թեեւ նույնիսկ տեղյակ չեմ, թե ինչ բախտի են արժանանում նման նամակները Բաղրամյան պողոտայի հայցնի պաշտոնավայրում:

Պրն նախագահ, այս տարի հերթական անգամ ազերիները գնդակոծել էին սահմանամերձ Ջինարի գյուղի երկու տուն՝ զգալի նյութական վնաս պատճառելով դրանց: Ընտանիքներով փախել էին տնից՝ սարսափի ծանր պահեր ապրելով: Այդ տներից մեկի անմիջական հարեւանությամբ մի փոքրիկ կրպակ է դրված, որը որպես յուրօրինակ թիրախ ավելի հաճախ է արժանանում «հարեւան» գնդացրորդների ուշադրությանը: Տանտեր-վաճառողը, որն, ի դեպ, երկրորդ կարգի հաշմանդամ է, իր բազմանդամ ընտանիքի գոյատեւման հանապազօրյան այդ կրպակից ստացած համեստ միջոցներով է հոգում՝ վաճառելով մոտ մի քանի հազար դրամ ընդհանուր արժողությամբ մանր-մունր իրեր: Եվ ահա, ասես ի լրումն ազերիների բարբարոսության, Ջինարի է ժամանում մարզի նորին գերազանցություն հարկային տեսչության ներկայացուցիչը եւ ինչ-ինչ խախտումների համար «բիզնեսմենին» տուգանում... 150,000 դրամով եւ, չբավարարվելով դրանով, գումարում եւս 25,000 դրամ վարչական տույժ՝ ահռելի մի գումար սահմանամերձ գյուղի խեղճուկրակ բնակչի համար: Ընդ որում, հարկահավաքը նրան չի տալիս դրամը գանձելու վերաբերյալ որեւէ փաստաթուղթ: Ապշեցնում է այս չինովնիկի ու նրան ուղարկողների արտառոց դաժանությունը (այս ողորմելիներին որեւէ օլիգարխի որեւէ օբյեկտի շեմից էլ ներս չէին թողնի): Շուրջօրյա թշնամական կրակոցների տակ գոյատեւող ջինարեցիները պարզապես հերոսներ են, որ շատերի պես չեն լքում իրենց սահմանամերձ բնակավայրը եւ շարունակում են ապրել այնտեղ՝ հողը մշակելով գիշերները: Եվ առհասարակ, այս տարածաշրջանում սուղ են, շատ սուղ են ապրուստի պայմանները, քանզի երկրամասը բառի բուն իմաստով ծվարած է լեռների մեջ՝ տասնյակ կիլոմետրերով կտրված տրանսպորտային խոշոր մայրուղիներից: Եթե նշյալ տխրահռչակ հարկային տեսուչը պետական տարական մտածողություն ունենար ու բանական մարդկային խիղճ, նա իր վերադասին կզեկուցեր, որ այդ մարդը հաշմանդամ է, որ նա երեք՝ մեկ զինվորի եւ երկու դպրոցականի հայր է, ու պետք է նրա նկատմամբ ներողամիտ լինել: Իսկ եթե այս չինովնիկը գործում է այլ կերպ, ապա վերածվում է սովորական խոտակերի, որի համար Ջինարին սոսկ արոտավայր է:

Պրն նախագահ, հարցը մասնավոր՝ առանձին դեպքի մասին չէ, եւ ոչ էլ մեր պահանջն է պատժել միայն իրենց գրպանի մասին մտածող պաշտոնյաներին: Բնավ: Նախկին Շամշադինի տարածաշրջանի բոլոր սահմանամերձ գյուղերն իսկապես գտնվում են աղետալի վիճակում, եթե չասենք՝ ողբերգական: Այս գյուղերը, որոշ վերապահությամբ, շարունակում են մնալ պատերազմական վիճակում: Դուք ինքներդ, պրն նախագահ, անցել եք պատերազմի բովով եւ հիանալի գիտեք, թե դա ինչ է նշանակում: Անցյալ դարի հայ գրողներից մեկը ցարական հարկահավաքներին կեղեքիչներ էր անվանում: Ահա եւ ստացվում է, որ ազգային պետությունն իր հարկային քաղաքականության մեջ չի դրսեւորում խելամիտ ճկունություն եւ առնվազն սահմանամերձ բնակավայրերում դառնում է նույնիսկ կեղեքիչ, նույնիսկ անողոք ու անմիտ: Ինչպե՞ս կարելի է նոսրացող բնակչության համար չստեղծել հարկային արտոնյալ պայմաններ, ինչպես վարվում է, օրինակ, Իսրայելն իր պաղեստինամերձ բնակավայրերում: Չէ՞ որ ստեղծված իրավիճակի ամենաանմխիթար հետեւանքը համատարած «ռուսաստանասփյուռ» արտագաղթն է, այն էլ, կրկին ընդգծենք, թշնամու հետ սահմանակից գոտուց: Եվ այն տպավորությունն է ստեղծվում, որ նորանկախ հայոց երկրի պետական այրերին դա առանձնապես չի էլ մտահոգում, իսկ եթե մտահոգում էլ է, ապա ամեն ինչ ավարտվում է մասնակի միջոցառումներով, որոնցից, ցավոք, ոչինչ չի փոխվում, երիտասարդությունը ինչպես լքում էր, այնպես էլ շարունակում է լքել հայրենի գյուղերը, թերեւս փախչելով ոչ այնքան կրակոցներից, որքան ծանր կենսապայմաններից, աշխատատեղերի բացակայությունից, խոր հիասթափությունից ու հուսահատությունից, անհեռանկարությունից: Ինչպես ասում է տարածաշրջանի հոգեւոր հովիվ տեր Արամ քահանա Միրզոյանը, ամեն անգամ, լինելով սահմանամերձ գյուղերում ու տեսնելով թշվառ իրողությունները, ինքը կես մարդ է դառնում: Կարելի է բերել բազմաթիվ վիճակագրական անամոթ փաստեր, թեեւ չենք կարծում, որ Հայաստանի կառավարությունը չգիտե այդ մասին:

Երեմնի շեն գյուղի՝ Մովսեսի դպրոցում սովորում էին 1000-ից ավելի աշակերտներ: Ներկայումս նրանց թիվը չի գերազանցում երկու հարյուրը, ավելի կոնկրետ՝ այս պահի դրությամբ՝ 167 աշակերտ:

Պառավախտ համայնքը, որ տարածաշրջանում հայտնի էր 360 հեկտար խաղողի, 125 հեկտար պտղատու այգիներով, կորցրել է 1417 հեկտար մշակովի տարածք, որից 1000-ը փաստացի մշակվում է ազերիների կողմից:

Այգեպար համայնքում ժամանակին աշխատել են երեք հզոր գործարան եւ մեկ օդանավակայան, որտեղ աշխատել է 3000-ից ավելի մարդ: Գյուղը, ի դեպ, ձեւավորվել է գործարաններում աշխատող բանվորների հենքի վրա: Գործող գյուղապետի հավաստմամբ, նախկինում շատերն էին երազում դառնալ այդ գյուղի բնակիչ: Մինչդեռ ընդամենը 500 մետր հեռավորության վրա տարեցտարի բազմապատկվում է թշնամական Ալիբեյլի գյուղի բնակչությունը, աղշեցնում են բարձրամերձ գյուղերի բնակիչներին բոլոր, կրկնում ենք՝ բոլոր հարկերից ազատելու առաջարկով: Պատասխանը բացասական է. չի կարելի տարբերակումներ մտցնել երկրի գյուղերի միջեւ: Բայց արդյո՞ք այսօր նույն վիճակում են (չտարբերակված) Տավուշի մարզի սահմանամերձ եւ, ասենք, Արարատյան դաշտի գյուղերը: Հավատացեք, եթե ոչինչ չփոխվի, ելնելով այս տրամաբանությունից, ապա հիշյալ գյուղերի ծերացող բնակիչներն իրոք կդառնան վերջին մոհիկաններ: Ի վերջո, ախր, այնքան աննշան է, գրեթե զոյական այդ բնակավայրերի հարկային «դերը» երկրի բյուջեի ձեւավորման մեջ: Եթե սահմանամերձ գյուղերը ամայանում են ու երկրի ղեկավարությունը արմատական ոչինչ չի ձեռնարկում, ապա դա պետական հանցագործություն է: Եթե չինովնիկը թքած ունի այս պարագայի վրա, ապա պետության ղեկավարին չի կարող չմտահոգել սահմանամերձ գյուղերը դատարկված տեսնելու իրական հեռանկարը: Իսկ հարկային բեռի թեթեւացման դեպքում գուցեեւ Մոսկվայի շինարարական շուկաներում օթեւանած նախկին շատ շամշադինցիներ վերադառնան իրենց ծննդավայրերը:

Պրն նախագահ, համերկրացիներիս անունից ինչո՞ւ եմ դիմում անձամբ Ձեզ: Որովհետեւ մեր այս փոքրիկ Հայաստանում նման մակարդակի հարցի լուծմանն ի զորու է միայն երկրի ղեկավարը: Ասվածը չպետք է ընդունել որպես սիրաշահում, այլ բոլորին հայտնի անաչառ իրողություն: Վերջերս Մովսես գյուղում՝ սահմանից ընդամենը 800 մետր հեռավորության վրա մոսկվայաբնակ մովսեսցիների ու տեղացիների ջանքերով բացվեց հոյակերտ մի եկեղեցի: Նշանակում է՝ մարդիկ ուզում են ապրել իրենց ծննդավայրում, բայց չեն կարողանում: Ներքին քաղաքականությունն այսօր պիտի դառնա Ձեր գործունեության առանցքը: Գրոշ չարժե այն անկախությունը, որի պայմաններում երկիրը դատարկվում է:

Հարգանքներով՝
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Տավուշի մարզ

ԶԻՆՎՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ռազմական օմբուդսմենի գրասենյակի հիմնադրման անհրաժեշտություն կա, բայց... ֆինանս չկա

Վեցամսյա գործունեության ընթացքում ՄԻՊ գրասենյակը բանակի հետ կապված խնդիրներով 50 նամակ-դիմում է ստացել: Դրական լուծում ստացել է 26-ը: Նախորդ տարի խնդրի վերաբերյալ 30 նամակ էր ստացվել, որոնցից միայն 2-ին էր լուծում տրվել: 2005-ին օմբուդսմենի գրասենյակը ստացել է 62 դիմում: Եթե, օրինակ, 2007-ին բանակի վերաբերյալ 10 դիմում է ստացվել, ապա 2009-ին ստացվել է 51 դիմում: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից հավաստիացնում են, որ սա բանակում մարդու իրավունքների ոտնահարումների ամբողջական պատկերը չէ: Ձեւավորված վախի մթնոլորտի ու անտեղյակության պատճառով բազմաթիվ զինվորներ իրենց հետ կատարված օրինախախտումները չեն բարձրաձայնում: Բանակում վերջերս կատարվող իրադարձությունների, սպանությունների եւ ինքնասպանությունների վերաբերյալ կազմակերպված քննարկումների ժամանակ մասնագետները, որպես բանակում մթնոլորտը փոխելու եւ խնդիրները շտկելու ձեւ, բազմիցս շեշտեցին ռազմական օմբուդսմենի գրասենյակի անհրաժեշտությունը: Նրանց գնահատմամբ՝ ռազմական օմբուդսմենը կկարողանա վեր հանել բանակում առկա խնդիրներն ու օգնել այն զինվորներին, որոնց իրավունքները ոտնահարվում են զորամասերում:

ՄԻՊ ռազմական եւ զինծառայության հարցերով խորհրդական **Ռուսամ Մահմուտյանը** աշխատակազմում աշխատում է 8 տարի: Նրա մեկնաբանությամբ՝ իրավագիտակցությունն ու ձեւավորված վախի մթնոլորտը թույլ չեն տալիս զինվորներին դիմել համապատասխան մարմիններին եւ ահազանգել մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների մասին: «Անհրաժեշտ է ճեղքել այդ պատնեշը ու մեզ դիմելու հնարավորությունը մեծացնել»:

Ռազմական օմբուդսմենի գրասենյակի ստեղծման մասին խոսակցությունները նոր չեն: Գրասենյակի անհրաժեշտության վերաբերյալ բազմաթիվ քննարկումներ են եղել, խորհրդարանական լսումներ, եվրոպացի տարբեր փորձագետներ են նման քննարկումներ կազմակերպել, սակայն, ըստ էության, բոլորն էլ զգում են, որ դա անհրաժեշտ է:

«Իրավական հարաբերությունները, սոցիալական միջավայրը շատ ավելի արդյունավետ կարող են լինել, եթե լինեն կոնկրետ մասնագիտացումներ: Եվրոպական երկրների օրինակով շատ լավ կլինի, որ ոչ միայն ռազմական, այլեւ կանանց եւ երեխաների համար նախատեսված օմբուդսմենի գրասենյակ գործի: Սակայն այսօրվա պայմաններում ռազմական օմբուդսմենի գրասենյակի հիմնումը անհրաժեշտ է», ասում է Մահմուտյանը:

Նա հավելում է, որ մասնագիտացված օմբուդսմենի գրասենյակի ստեղծումը պարունակում է ֆինանսական լուրջ խնդիրներ:

«Անհնար է նոր օմբուդսմենի գրասենյակ բացել՝ հաշվի առնելով երկրի ներկայիս տնտեսական ծանր վիճակը: Երբ պաշտպանի գրասենյակը նոր աշխատատեղերի բացման առաջարկությամբ դիմում է կառավարությանը եւ մերժում ստանում, անիրատեսական է ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծումը: Դա կապված է ռեսուրսների բացակայության եւ ֆինանսական ճգնաժամի հետ»:

«Մինչեւ ռազմական օմբուդսմենի գրասենյակի հիմնումը լավ կլինի 5 հոգուց կազմված խումբ տալ պաշտպանի գրասենյակին, որպեսզի մենք կարողանանք ավելի արդյունավետ աշխատել: Խմբում ընդամենը 2 մասնագետ կա: 60 դիմումի պարագայում գուցե հնարավոր է 2 հոգով աշխատել, սակայն իրական պատկերը ստանալու համար մեզ անհրաժեշտ է խումբ, որ զորագիտեր զորամասերում աշխատի: Մեր՝ զորամասում գտնվելը ի նպաստ զինվորի կլիներ, եւ յուրաքանչյուր հրամանատար ու սպա քաջ կգիտակցեր, որ պետք է ձգվի»:

Մահմուտյանը պատմում է, որ բժշկական մասով բազմաթիվ խախտումների օրինակներ են հայտնաբերել: «Եղել է դեպք, երբ ստի արատով հիվանդ զինվորին ասել են, որ նա պետք է անցնի ոչ շարային ծառայության, սակայն զորամասերից մեկում մարտական հերթապահություն է իրականացրել: Մեր միջնորդությամբ զինվորին ոչ մարտական հերթապահություն նշանակեցին: Սակայն հետագայում ծնողները հայտնեցին, որ երիտասարդը մասնակցում է ընդհանուր շարային ծառայության: Դիմեցինք նախարարությանը եւ նախարարի հրամանով զինծառայողին տեղափոխեցին մարտական հերթապահություն չիրականացնող զորամաս:

2009-ին զորակոչիկը բանակ էր եկել լաթիկներով, որովհետեւ չէր կարողանում կոշիկ հագնել. երակներն էին այտուցվել: Մեր միջնորդությամբ տարկետում նշանակվեց, որպեսզի տղային վիրահատեին: Խնդիրները բազմաթիվ են: Երիտասարդը հարթաթաթ է, բայց նրան տարել են բանակ: Զորամասում այցելությունների ժամանակ հայտնաբերել ենք, որ զինվորը 40 աստիճան ջերմությամբ նշանակվել է օրապահ», ասում է նա՝ հավելելով, որ իրականում մարդու իրավունքների խախտումներն ավելի շատ են: Ռազմական օմբուդսմենը կնպաստեր հարցի լուծմանը, սակայն դրա համար ֆինանսներ չկան: Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մամլո խոսնակ **Դավիթ Կարապետյանի** մեկնաբանությամբ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման համար անհրաժեշտ են սահմանադրական փոփոխություններ, որովհետեւ ներկայիս սահմանադրությունը թույլ չի տալիս հանրապետությունում երկու օմբուդսմենի գրասենյակ ունենալ:

«Այժմ պաշտպանության նախարարությունն ու մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը համագործակցության ընդլայնման քննարկումներ են կազմակերպում, որոնց նպատակն է առավել սերտ համագործակցություն երկու գերատեսչությունների միջեւ: Ըստ Կարապետյանի՝ ներկա պայմաններում առավել նախընտրելի է զարգացնել ՄԻՊ-ի ռազմական խորհրդականի դերը»:

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ-թուրքական գործընթացը տապալվեց Ադրբեջանի մեղքով

Թուրքական առաջատար թերթերի խմբագիրներն ու հայտնի սյունակագիրները չեն ժխտում, որ հայ-թուրքական գործընթացի տապալման գլխավոր պատճառներից էին Ադրբեջանի հիստերիկ պահվածքն ու բացասական դիրքորոշումը:

Թուրքական Today's Zaman օրաթերթի տնտեսական բաժնի խմբագիր Մուսթաֆա Էդիբ Յըլմազի գնահատմամբ՝ հայ-թուրքական արձանագրություններն ու Հայոց ցեղասպանության հարցերը չպետք է միասին քննարկել: Թուրքիան եւ Հայաստանը հարեւաններ են: Աշխարհագրական դիրքն անհնար է փոխել, հետեւաբար անհրաժեշտ է հարաբերություններ հաստատել երկրների միջեւ: Յըլմազի մեկնաբանությամբ՝ սահմանի բացումը երկկողմանի նպաստավոր քայլ կլինի, սոցիալական, տնտեսական զարգացում, առաջխաղացում կնկատվի:

Յըլմազը արդարացի չի համարում գործընթացի տապալման համար միայն կառավարությանը մեղադրելը: «Նման հարցերը պետք է քննարկվեին ժողովուրդների մակարդակով: Մինչդեռ երկու հասարակությունները միմյանց չեն ճանաչում, առկա է երկկողմանի ատելություն: Այս պայմաններում իշխանությունը չի կարող քայլ կատարել», ասաց Յըլմազը:

Today's Zaman-ի տնտեսական բաժնի խմբագիրը համամիտ չէ, որ թուրքական կառավարությունը հայ-թուրքական հարաբերություններում չի ձգտում առաջընթաց քայլ կատարել: «Ինչպե՞ս կարող ենք որոշել՝ հայկական կո՞ղմն է ավելի շատ ցանկանում, որ հարաբերությունները բարելավվեն, թե՞ թուրքական: Թուրքիան մեծ ցանկություն ուներ սկզբում, բայց չնախատեսված իրադարձությունների հետեւանքով, երկու տարի առաջվա համեմատությամբ, այսօր ոգին փոխվել է, ցանկությունը՝ նվազել: Պատճառը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ եղած խնդիրներն են: Սա շատ նուրբ քաղաքական շախմատ է: Ադրբեջանը որեւէ այլ երկիր չէ Թուրքիայի համար, անկախ ամեն ինչից, եւ դժբախտաբար Թուրքիան կախված է Ադրբեջանի կարծիքից: Իսկ Ադրբեջանը կտրականապես դեմ էր արտահայտվում հայ-թուրքական հարաբերությունների հաստատմանը: Կարծում եմ՝ հիմնական խնդիրը Ադրբեջանն էր»:

Գրեթե նույն կարծիքն է հայտնում նաեւ Chumhuriyet թերթի խմբագիր Հասան Էրիշը: Նա համոզված է՝ մինչ հայ-թուրքական հարաբերություններ նախաձեռնելը թուրքական կառավարությունը Ադրբեջանին արտաքին քաղաքական կուրսի փոփոխության մասին տեղյակ չի պահել: «Դա ազդեցիկ եղավ: Փաստացի Թուրքիան եւ Ադրբեջանը երկու պետություն, մեկ ազգ են համարվում, սակայն Ադրբեջանը դռները վառեց, ու այդ երեւույթը վախեցրեց ներկայիս կառավարությանը: Նրանք ընդդիմությունից էլ օժանդակություն չստացան, Ադրբեջանի հայտարարությունները ազդեցիկ դարձան, ու Թուրքիան որոշեց չշարունակել գործընթացը»:

Որ Ադրբեջանի ազդեցությունը շատ մեծ է եւ երրորդ երկրի գործոնով է պայմանավորված, որ հայ-թուրքական հարաբերություններում առաջընթաց չի գրանցվում, փաստում է Haberturk-ի սյունյակագիր Ամբերին Զամանը: Նա վստահ է՝ երկու երկրները դիվանագիտական հարաբերություններ չունեն, որովհետեւ Ադրբեջանը դեմ է: «Իսկ Ադրբեջանը Ադրբեջան է, նա Թուրքիայի համար սովորական պետություն չէ»:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստամբուլ-Երեւան

Կիեւում «հետաքննում են» հետաքննական լրագրությունը

Ավելի քան հինգ հարյուր հետաքննող լրագրողների մասնակցությամբ Կիեւում երեկ մեկնարկեց Հետաքննող լրագրողների գլոբալ համաժողովը: Քառօրյա աշխատանքների ընթացքում բազմաթիվ զեկուցումներ ու ներկայացումներ են նախատեսված այնպիսի մասնագետների մասնակցությամբ, որոնք ինչպես հայտնի, այնպես էլ ոչ ճանաչված կամ լայն տարածում ունեցող լրատվամիջոցներ են ներկայացնում:

Համաժողովի նպատակն ամենից առաջ անդրադարձն է հետաքննական լրագրության ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումներին, երբ, մի կողմից, հետաքննություններն օգնում են բացահայտելու ոչ հաճելի ու գաղտնի պահվող ճշմարտությունը, մյուս կողմից՝ բազմաթիվ խոչընդոտների բախվելու արդյունքում լրագրողական վարքագծի բացասական կողմերը ազդում են հետաքննություն ընդհանրապես սկսելու ցանկության վրա:

Համաժողովում, որ հովանավորում են բազմաթիվ կազմակերպություններ, այդ թվում՝ Բաց հասարակության հիմնադրամը, Ինտերնյուս ցանցը, ԱՄՆ զարգացման գործակալությունը, Լրագրողների միջազգային աջակցության հաստատությունը, դանիական «ՍԿՈՒՊ» հիմնադրամը եւ այլն, առաջին անգամ փորձ է արվում համակարգային մոտեցմամբ լուծել լրագրողների միջեւ կապեր հաստատելու հարցը:

Այս ամենի տրամաբանությունն այն է, որ լրագրողական հետաքննությունները վաղուց անցել են վերսահմանային համագործակցության միջոցով իրականացվելուն, քանի որ հետաքննության նյութը եւս դադարել է տեղական մակարդակով սահմանափակված լինելուց:

Համաժողովն ինքը դանիացի եւ ուկրաինացի լրագրողների միջազգային նախագիծ է, որի նպատակներից մեկն էլ այն ժամանակակից մեթոդներին ծանոթացումն է, որոնց միջոցով հնարավոր է լուծել հետաքննող լրագրողների առջեւ ծառացող խնդիրները՝ ֆինանսական ապահովման ռեսուրսների ու աշխատանքը տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայիս հնարավորությունների օգտագործմամբ իրականացնելու առումով: Ավելի քան քառասուն լրագրողներ, այդ թվում՝ նաեւ Հայաստանից, համաժողովի ընթացքում կներկայացնեն իրենց աշխատանքներն ու հետաքննական լրագրության հայաստանյան դժվարությունները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կիեւ

«Միջազգային ներումը» Կանադային հորդորում է ձերբակալել Բուշին



«Միջազգային ներում» իրավապաշտպան կազմակերպությունը Կանադայի իշխանություններին կոչ է արել ձերբակալել ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ կրտսերին եւ նրան ենթարկել քրեական պատասխանատվության: Այդ մասին հաղորդվում է կազմակերպության մամլո տեղեկագրում:

Իրավապաշտպանների կարծիքով, Բուշը պետք է պատասխանատվություն կրի այն իրավախախտումների եւ կտանջների համար, որ նրա գիտությամբ ԿՀՎ-ի աշխատակիցները կատարել են ենթադրյալ ահաբեկիչների հանդեպ: Իր նախագահության որոշ Բուշն անձամբ թույլատրել էր «ընդլայնել հարցաքննության մեթոդները», իսկ 2010-ին խոստովանել էր, որ արտոնել է ջրահեղձման նմանակում կիրառել ենթադրյալ ահաբեկիչների նկատմամբ:

Կազմակերպությունը նշում է, որ միջազգային ընկերակցությունը պետք է պատասխանատվության կանչի Բուշին, քանի որ ԱՄՆ իշխանությունները դա չեն անում: «Միջազգային ներումը» Կանադայի իշխանություններին զգուշացրել է, որ անգործունությունը տվյալ դեպքում ՄԱԿ-ի հակակտանջային կոնվենցիայի խախտում է:

Բուշը պետք է Կանադա ժամանի հոկտեմբերի 20-ին, որպեսզի մասնակցի տնտեսական գագաթաժողովին: 2011-ի փետրվարին իրավապաշտպանների համանման պահանջների պատճառով Բուշը չեղյալ էր հայտարարել իր ուղեւորությունը Շվեյցարիա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Իրանական ավիաընկերությունն ամբաստանվում է ահաբեկչությանն օժանդակելու մեջ

ԱՄՆ ֆինանսների նախարարությունը իրանական Mahan Air մասնավոր ավիաընկերությանը մեղադրել է Իրանի հատուկ ծառայություններին տրանսպորտային եւ ֆինանսական օժանդակություն տրամադրելու մեջ: Ըստ ամերիկացիների պնդման, այդ ծառայություններն են ԱՄՆ-ում մահափորձ նախապատրաստել Սաուդյան Արաբիայի դեսպանի դեմ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Նախարարության հայտարարության մեջ ասվում է, որ Mahan Air-ը մշտապես աջակցում է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին, որի գործակալներից մեկը՝ Գոլամ Շահուրին կասկածվում է դեսպանի սպանության նախապատրաստման մեջ:

Կորպուսի ներկայացուցիչը արդեն պաշտոնապես հերքել է իր հնարավոր մեղսակցությունը ԱՄՆ-ի դեմքերին, հաղորդում է Ֆրանսպրեսը:

ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը իր հերթին հայտարարել է, որ համաշխարհային ընկերակցությունը պետք է դատապարտի Իրանին՝ սաուդցի դեսպանի նկատմամբ նրա գործողությունների համար, ինչպես նաեւ միջազգային ահաբեկչությանն օժանդակելու եւ քաղաքականության մեջ բռնի մեթոդներ կիրառելու համար:

Հոկտեմբերի 11-ին ԱՄՆ-ում սաուդցի դեսպանի դեմ մահափորձի մեղադրանքներ էին ներկայացվել Իրանի երկու քաղաքացիների: Մեկը վերոհիշյալ Շահուրին է, մյուսը՝ Մանսուր Արբաբսիարը, որն ունի նաեւ ԱՄՆ քաղաքացիություն: ՀԴԲ-ն պնդում է, որ երկու իրանցիները ծրագրել էին դեսպանին պայթեցնել ԱՄՆ տարածքում:

Իրանը կտրականապես մերժում է այդ մեղադրանքները: ՄԱԿ-ում Թեհրանի ներկայացուցիչ Մուհամմեդ Խազային կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունին գրած նամակում գանգատվում է ԱՄՆ-ից: Խազային հայտարարել է, որ իր երկիրը դատապարտում է ԱՄՆ-ի գործողությունները, որի առաջ բաված մեղադրանքները քաղաքական շարժառիթներ ունեն:

Սերբիան դարձավ ԵՄ անդամության թեկնածու

Պաշտոնական Բրյուսելը հանձնարարել է շնորհել Սերբիային Եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ընդսմին Եվրահանձնաժողովը ընդգծել է, որ ԵՄ-ին Սերբիայի անդամակցության բանակցությունները կարող են սկսվել միայն Կոսովոյի կարգավիճակի բոլոր հարցերի կարգավորումից հետո: Մայիսին ԵՄ միջնորդությամբ Սերբիայի եւ Կոսովոյի սկսած բանակցությունների հերթական փուլը 2011-ի սեպտեմբերի վերջերին անարդյունք ավարտվեց սահմանային բախումների պատճառով: Պրիշտինան փորձել էր այնտեղ սահմանային պահակակետ ստեղծել, դրանով իսկ հարուցելով երկրամասի սերբ բնակչության դժգոհությունը, որը չի ուզում անջատվել Սերբիայից:

Բելգրադը Եվրամիություն ընդունվելու հայտ ներկայացրեց 2009-ին, սակայն այն ժամանակ դրա հաստատմանը խոչընդոտում էր պատերազմական հանցագործությունների մեջ ամբաստանվող մի շարք անձանց, նախ եւ առաջ գեներալ Ռատկո Մլադիչի ազատության մեջ գտնվելը: Մինչեւ 2011-ի հուլիս ամբաստանյալները Սերբիայում ձերբակալվեցին եւ հանձնվեցին Հաագայի միջազգային դատարանին:

Միաժամանակ Եվրահանձնաժողովը հայտարարել է, որ ԵՄ անդամակցության բանակցություններ են սկսվում նախկին հարավսլավական հանրապետություն Չեռնոգորիայի հետ, որն ավելի վաղ էր ստացել ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակ:

Նախկին Հարավսլավիայի երկրներից այսօրվա դրությամբ Եվրամիության միակ անդամը Սլովենիան է: ԵՄ-ին անդամակցելու ուղղությամբ զգալի քայլեր է կատարել Խորվաթիան. նրա անդամակցությունը նշանակված է 2013-ին, իսկ դրան վերաբերող պայմանագիրը պետք է ստորագրվի արդեն 2011-ի դեկտեմբերին:

Բալկանյան պետություններից առայժմ մերժված է Ալբանիայի անդամակցության հայտը: Եվրահանձնաժողովը գտնում է, որ չնայած որոշակի առաջընթացին, այդ երկիրը մինչեւ օրս չի կատարել բոլոր անհրաժեշտ պայմանները:

Առաջարկվում է Ռումինիային եւ Բուլղարիային ընդունել Շենգենյան գոտի

Եվրախորհրդարանի երեկվա լիագումար նիստում պատգամավորներն ընդունել են բանաձեւ, որը Եվրամիության երկրներին կոչ է անում Ռումինիային եւ Բուլղարիային ընդունել Շենգենյան գոտի:

Բրյուսելում հավաքված եվրոպատգամավորների կարծիքով, «լրացուցիչ չափանիշներ չեն կարող սահմանվել ԵՄ անդամ այն պետությունների համար, որոնք Շենգենյան գոտի մտնելու փուլում են»:

Շենգենյան գոտու մասնակից երկրների ներքին գործերի նախարարները սեպտեմբերին բրյուսելյան հանդիպման ժամանակ ընդհանուր համաձայնության չէին եկել Եվրոպայում անձնագրային եւ մաքսային հսկողության վերացման համաձայնագրին Ռումինիայի եւ Բուլղարիայի միանալու հարցում: Անդամակցության համար պահանջվում էր Շենգենյան գոտու մեջ մտնող եվրոպական բոլոր 22 երկրների հավանությունը, սակայն որոշման վրա վետո էին դրել Հոլանդիան եւ Ֆինլանդիան, որոնց կարծիքով՝ Ռումինիան եւ Բուլղարիան չէին կատարել կաբառակերության եւ կազմակերպված հանցավորության դեմ մղվող պայքարի պահանջները:

ՓԱՐԻԶ

Բալաֆյանի «Ճակատագրի սեւ շունը» նաեւ ֆրանսերեն

Ժորժ Ֆեսայի թարգմանությամբ «Մեթիս-պրես» հրատարակչատունը Ֆրանսիայում ֆրանսերեն լեզվով լույս է ընծայել ամերիկահայ ճանաչված եւ մրցանակների արժանացած գրող Փիթեր Բալաֆյանի «Ճակատագրի սեւ շունը» հուշագրությունը, որի առաջին անգլերեն հրատարակությունը 1997-ին համարվել էր «Տարվա ուշագրավ գրքերից մեկը»՝ «Նյու Յորք թայմսի» կողմից, իսկ «Լոս Անջելես թայմսն» այդ ժամանակ գրել էր. «Նրբագեղ եւ հուզիչ ոճով (գրված վեղը) նկարագրում է Բալաֆյանի զարգացումը, թե ինչպես նա վերահասու է դարձել իր ընտանիքի պատմության իրողություններին, ինչպես նաեւ մարդկության դեմ թուրական կառավարության կողմից իրագործված վաթարագույն ոճիրներից մեկը թաքցնելու շարունակվող քարոզարշավի զարհուրելի հետեւանքներին: Իր ընտանիքի անցյալի գաղտնիքները երեւան հանելով եւ ներկայի վրա դրանց ազդեցությունը բացատրելով «Ճակատագրի սեւ շունը» նորովի իմաստավորում է ամերիկացի լինելու նշանակությունը»:

Բալաֆյանն իր գրքի ֆրանսերեն թարգմանության առթիվ Ֆրանսիա է ժամանելու մասնակցելու Գրքի ազգային կենտրոնի հովանավորությամբ կազմակերպված «Հայաստան-Հայեր» փառատոնին, որը տեղի է ունենալու հոկտեմբերի 16-21-ը: Բալաֆյանից բացի փառատոնին մասնակցելու են նաեւ գրողներ Հայաստանից, Եվրոպայից, Մերձավոր Արեւելքից, Հարավային եւ Հյուսիսային Ամերիկաներից: Նրանք «Արեւելյան ճեպընթացով» շրջագայելու են Ֆրանսիայով եւ միջոցառումներ անցկացնելու Մարսելում, Ավինիոնում, Վալանսում, Լիոնում եւ Փարիզում:

Մարսելում հոկտեմբերի 16-ին «Պրադո» պողոտայում գտնվող կենտրոնում Բալաֆյանը դասախոսություն է կարդալու եւ հատվածներ ընթերցելու հուշագրություններից իր մյուս «Հայկական Գողգոթա» գրքից, որը պատմում է 1920-ական թվերից մինչ իր մահը՝ 1934 թվականը Հարավային Ֆրանսիայի հայկական եկեղեցու առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Բալաֆյանի ոդիսականի մասին:

Այս մասին տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեֆթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 1-ի համարը, նշելով, որ «Le Chien Noir Du Destin» ֆրանսերեն գիրքը կարելի է պատվիրել «www.metispresses.com» կայքից:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

Եվրոպայում հոսկայաս ծափահարել են Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբին

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 1-ը Հայաստանի անկախության 20-ամյա հոբելյանին էր նվիրված Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի համերգաշարը Եվրոպայում: Երեկ մշակույթի նախարարությունում նվագախմբի գեղեցիկ եւ գլխավոր դիրիժոր **Սերգեյ Սմբատյանը**, Ալ. Սպենդիարյանի անվ.օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենեջեր **Գեւորգ Հակոբյանը** հանդիպեցին լրագրողների հետ ու պատմեցին, թե ինչպիսի շռնդալից հաջողությամբ են անցել համերգները Բրյուսելում, Բեռլինում, Կարլզրուեում, Հաագայում: Բրյուսելի Palais des beaux-ARTS համերգասրահում համերգին ելույթ են ունեցել նաեւ աշխարհահռչակ եւ վիրտուոզ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը եւ Բրյուսելի ու Լիեժի Թագավորական կոնսերվատորիայի պրոֆեսոր Կարեն Հարությունյանը (ջութակ): Այդ համերգին ներկա է գտնվել ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, որն այդ օրերին պաշտոնական այցով գտնվում էր Բրյուսելում, Եվրոխորհրդի եւ ՆԱՏՕ-ի ներկայացուցիչներ: Կարլզրուեում՝ KONZERTHAUS համերգասրահում, համերգի մենակատարներ Գեւորգ Հակոբյանի (բարիտոն) ու Լուսինե Խաչատրյանի (դաշնամուր) ելույթները մեծ ոգեւորություն են առաջացրել Բաադեն Բաադենի երաժշտասեր հասարակության մոտ: Համերգին ներկա են եղել Բաադեն Բաադենի շրջանի մշակույթի նախարարը, Երաժշտական համալսարանի ռեկտորը, Գերմանիայում անցկացված համերգների հովանավոր Գունտեր Պիլարսկին: Նվագախմբի եզրափակիչ համերգը Հաագայի Dr. ANTON PHILIPSZAAL/LUCENT DANSTHEATER համերգասրահում դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ ընդունվել է հոսկայաս եւ երկարատեւ ծափերով:

«**Ազգի**» հարցին Սերգեյ Սմբատյանն ասաց, որ նման համերգաշարերը, փառատոները հրաշալի առիթ են, որ աշխարհի տարբեր բեմերում հնչեն ոչ միայն օտար, այլ նաեւ հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: «Արդեն բազմաթիվ հրավերներ ենք ստացել տարբեր երկրներից եւ համերգային ծրագրերում մշտապես տեղ կգտնեն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները», ասաց նա: Եվրոպական համերգներից ոգեշնչված՝ նվագախումբի հոբելյանական եզրափակիչ համերգը կկայանա հոկտեմբերի 15-ին Արամ Խաչատրյան համերգասրահում: Այդ օրը մեր հայրենակից, արտերկրում բնակվող երաժշտներ՝ Հայրապետ Առաքելյանը-սաքսոֆոն (Գերմանիա), Հրաչյա Ավանեսյանը-ջութակ (Բելգիա) եւ Արտեմի Չոլոկյանը-հոբոյ (ՌԴ) իրենց կատարողական արվեստը կներկայացնեն մեր երաժշտասերներին: Ծրագրում կհնչեն Ալեսանդրո Մարչելլոյի, Յան Բենդայի, Էդվարդ Միրզոյանի, Ռոբերտո Մոլինելլիի, Ալեքսանդր Հարությունյանի, Էռնեստ Շոսոնի, Մորիս Ռավելի ստեղծագործությունները:

Իսկ մինչեւ տարեվերջ նվագախումբը դեռ մի քանի համերգներով հանդես կգա տարբեր համերգասրահներում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ասոմ Էգոյանը՝ դասախոս Տորոնտոյի Ռիերսոն համալսարանում

CBS News լրատու գործակալության հաղորդմամբ, կանադահայ միջազգային ճանաչում ձեռք բերած ռեժիսոր Ասոմ Էգոյանը 2011-12թթ. ուսարվանից սկսած որպես ականավոր կինոգործիչ դասավանդում է Տորոնտոյի Ռիերսոն համալսարանում:

«Արարատ», «Քաղցր աղագա», «Էկզոտիկա», «Ֆելիսիայի ճանապարհորդությունը» եւ այլ ֆիլմերի հեղինակ Էգոյանը, որ նույն համալսարանի շրջանավարտներից է, իր նշանակման առիթով բարձր է գնահատել ուսանողներին ազատ արտահայտվելու եւ ստեղծագործելու հնարավորություն տալու համալսարանի ջանքերը:

Դասախոսություններից բացի Էգոյանը ուսանողների հետ աշխատելու է «Կանադական բեմ» թատրոնի խաղացանկում ընդգրկված Մարտին Կրիմոի «Դաժան եւ քնքուշ» պիեսի վրա, որպեսզի այն հետագայում բեմադրվի Հյուսիսային Ամերիկայում: «Ուսանողները շատ բան են սովորելու վարպետ ռեժիսորից», ասել է համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր Ալան Շեպարդը:

Հ. Ծ.

Գիրք՝ Շահեն Մեղրյանի մասին

Լույս է տեսել **Աշոտ Պետրոսյանի**՝ ազատագրական շարժման գործիչ Շահեն Մեղրյանի մասին պատմող «Մեծն Շահեն» գիրքը: - Գրքում լուսաբանվում են հայդուկապետ Շահեն Մեղրյանի կենսագրության էջերը, Շահումյանում ազատագրական պայքարի ծավալումը, հերոսի ծննդավայրի եւ Գյուլիստանի մելիքության պատմա-աշխարհագրական առանձնահատկությունները: Շահենենց ընտանիքը տիպական օրինակն է գյուլիստանցիների ավանդական կենցաղավարության, ամրության, հաստատակամության,- գրում է Պետրոսյանը՝ հավելելով, թե քանի որ Մեղրյանը պատմական դեմք է, ուստի եւ նպատակահարմար է նրա կենսագործունեությունն ու հոգեբարոյական կերպարը կապել իր պատմաաշխարհագրական միջավայրին:

Գրքի շնորհանդեսը տեղի կունենա այսօր՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում, ժամը 12-ին:

Շնորհավորում ենք

Երեկ լրացավ Հայաստանի գրողների միության նախագահ, գրող եւ հրապարակախոս **Լեւոն Անանյանի** ծննդյան 65-ամյակը: «**Ազգը**» իր եւ ընթերցողների անունից ջերմորեն շնորհավորում է այդ առթիվ եւ հոբելյարին մաղթում առավել բեղմնավոր գործունեություն ի շահ մեր գրականության եւ գրական միջավայրի զարգացման:

Երիտասարդ նկարչուհի Լիանա Դանիելյանի (Դալիա) «Չորս եղանակ» ցուցահանդեսը

Դալիան ավարտել է Երեւանի պետական համալսարանի արվեստաբանության ֆակուլտետը եւ ՀՀ պետական կառավարման ակադեմիան: Այժմ աշխատում է ՀՀ կառավարության աշխատակազմում:

Նկարել սկսել է մանկուց: 2006 թ-ին ծանոթացել է հայ անվանի նկարչուհի Պարուհի Թեբելիկյանի հետ եւ երեք տարի աշխատել նրա արվեստանոցում: Պետք է նշել, որ Թեբելիկյանը, որ երկար ժամանակ նկարչություն էր դասավանդել ուսումնական տարբեր հաստատություններում, չափազանց գոհ էր իր աշակերտուհուց եւ հաճախ էր խոսում նրա աշխատասիրության, գունային զգացողության եւ արտակարգ ընդունակությունների մասին:

Սա նկարչուհու երկրորդ անհատական ցուցահանդեսն է: Առաջինը բացվեց 2009 թ-ին Նարեկացի արվեստի միությունում: Իր առաջին ցուցահանդեսը Լիանան նվիրել էր ուսուցչուհու հիշատակին:

Լիանան հոգով արվեստագետ է: Բնությունը նրան օժտել է գեղանկարչին բնորոշ հատկանիշներով եւ նկարչությունը դարձել է նրա ամենասիրելի զբաղմունքը:

Շուրջ 37 աշխատանք է ներկայացրել Լիանա Դանիելյանը: Դրանք դիմանկարներ են, բնանկարներ, նատյուրմորտներ, որոնք բոլորն էլ ներքին տրամադրությունների, պորտրետների արտահայտություններ են, կատարված գունային վառ լուծումներով: Նկարչուհին կարողանում է տեսնել գեղեցիկը եւ իր տեսածը փոխանցել կտավին:

Աշխատասեր, հետեւողական, իր գործին նվիրված անձնավորություն է Լիանան եւ վստահորեն գնում է իր նպատակի ետեւից, շարունակ ձգտելով կատարելագործել իր բնատուր շնորհը:

Խիստ նպատակաուղղվածություն, պատասխանատվության զգացում, անմնացորդ նվիրում ընտրած ճանապարհին - ահա սրանք են նկարչուհու արվեստին բնորոշ գծերը:

Լիանան լի է ստեղծագործական ավյունով ու բազմազան մտահղացումներով: Կարծում եմ, որ նրա արվեստը դեռ կնշանավորվի նոր ձեռքբերումներով:

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՓԻԼՈՍՅԱՆ

Լույս տեսավ Բյուրականի աստղադիտարանին նվիրված գրքույկը

Օրերս էդիթ-Փրինքե հրատարակության կողմից լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանին նվիրված գրքույկ, որը նախատեսված է աստղագիտությամբ եւ աստղադիտարանով հետաքրքրվողների, դպրոցականների եւ ուսանողների, աստղադիտարանի այցելուների եւ այլոց համար: Գրքույկը բաղկացած է 64 էջից, կազմված է այցեքարտի սկզբունքով եւ ներկայացնում է Բյուրականի աստղադիտարանի մասին ամփոփ եւ լիարժեք տեղեկություններ: Նրանում տեղ են գտել Բյուրականի աստղադիտարանի համառոտ պատմությունը, մեծ գիտական Վիկտոր Համբարձումյանի կենսագրությունը, աստղադիտարանում նախկինում աշխատած վաստակաշատ 11 այլ գիտնականների (Բ.Ե. Մարգարյան, Գ.Ա. Գուրզադյան, Լ.Վ. Միրզոյան, Մ.Ա. Առաքելյան եւ այլոք) համառոտ կենսագրությունները, տեղեկություններ աստղադիտարանի դիտակների (2.6մ, 1մ Շմիդտ եւ այլն) եւ այլ գիտական սարքավորման, գիտական գրադարանի եւ թիթեղադարանի, Բյուրականյան շրջահայությունների (այդ թվում ՅՈՒՆԵՍԿՈ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային ռեգիստրում ընդգրկված Մարգարյանի հանրահայտ շրջահայության), Բյուրականում անցկացված գիտական միջոցառումների, միջազգային գիտական համագործակցության մասին, բերված են աստղադիտարանի ողջ գիտական կազմի, ինչպես նաեւ արտասահման տեղափոխված նախկին աշխատակիցների տվյալները: Վերջում տրված է հայ աստղագետների կողմից եւ նրանց մասին հրատարակված կարեւորագույն գրքերի ցուցակը: Լինելով կարեւորագույն գիտական, կրթական եւ մշակութային օջախ, Բյուրականի աստղադիտարանը ներկայացված է նաեւ որպես այցելությունների կենտրոն: Հետաքրքրական է, որ վերջին անգամ Բյուրականի աստղադիտարանի մասին հայերեն լեզվով գրքույկ էր հրատարակվել ավելի քան 30 տարի առաջ՝ 1978 թվականին:

Ռոման Բերեզովսկի. «Կարմիր քարտն ինձ տոկի մեջ գցեց»

Դուբլինում տեղի ունեցածը Հայաստանի հավաքականի դարպասապահ Ռոման Բերեզովսկու մարզական կարիերայում ամենադրամատիկ ու ցավալի միջադեպն էր, որը ողջ կյանքում դժվար թե մոռացվի: Փորձառու դարպասապահի հետ հարցազրույց է ունեցել «Սովետսկի սպորտի» թղթակիցը, որը որոշակի կրճատումներով ներկայացնում ենք ընթերցողներին:

- Ինչպե՞ս է իրեն զգում անարդարացիորեն պատժվածը:

- Ինձ համար շատ ծանր է, վրդովված եմ: Իսկ երբ տեսա կարմիր քարտը, պարզապես տոկի մեջ ընկա:

- Սթրեսային վիճակից ինչպե՞ս ես դուրս գալիս:

- Ինքնաթիռում, Երևան վերադառնալիս, Պելեւին էի լսում: Սակայն նյարդայնացած վիճակում տեխստը դժվար էի ընկալում, միեւնույն է, մտածում էի ֆուտբոլի մասին: Անուն գիշեր անցկացրի: Սկզբում երկար ժամանակ սպասում էինք դոպինգ ստուգման ենթարկվող մեր խաղընկերներին, հետո՝ թռիչքին: Դժվար էր բոլոր առումներով:

- Հանդերձարանում չարասվեցի՞ր:

- Իռլանդիայում չեմ արասվել: Բոլորը տեսան, որ ինձ սխալ հեռացրին դաշտից: Իսկ ահա Երեւանում չկարողացա ինձ զսպել, երբ «Զվարթնոց» օդանավակայանում ֆուտբոլասերները ծափողջույններով ու մեծ ոգեւորությամբ դիմավորեցին մեզ:

- Անցնենք առաջ: Քեզ դաշտից հեռացրին, ի՞նչ եղավ հետո:

- Ես մի անգամ էլ մրցավարին ասացի, որ խախտում թույլ չեմ տվել, որ գնդակը դիպել է կրծքիս: Ցանկանում էի խաղը դիտել, սակայն ասացին, որ իրավունք չունեմ գտնվելու վազքուղյակում եւ պետք է հանդերձարան գնամ: Ցնցուղ ընդունելուց հետո երբ վերադարձա, մարզադաշտի աշխատակիցների վերաբերմունքն իմ հանդեպ փոխվել էր: Երեւի դիտել էին կրկնապատկերը ու համոզվել, որ մրցավարը սխալ էր: Եկան, ներողություն խնդրեցին եւ հրավիրեցին տրիբունայից դիտելու խաղը: Զգում էի, որ շրջապատս կարծես մեղավոր էր զգում մրցավարի սխալի համար:

- Իսկ մրցավարնե՞րը...

- Խաղի ավարտից հետո մեր ֆեդերացիայի ներկայացուցիչները փորձել էին խոսել մրցավարի հետ, պարզել իրողությունը, սակայն վերջինս կոպիտ ձեւով ինչ-որ բան էր ասել ու փակել էր դուռը՝ թույլ չտալով մտնել մրցավարական սենյակ: Ես չեմ մասնակցել դրան: Ասում են, որ այդ խաղը Գոնսալեսի կարիերայում վերջինն էր: Մենք մի քանի անգամ դիտել ենք այդ չարաբաստիկ դրվագի կրկնապատկերը ու ցնցվել ենք մրցավարի կայացրած անարդար վճռից: Իռլանդացին ձեռքով խաղաց: Պարզվում է, որ մրցավարներից ոչ մեկը դա չի նկատել: Ես գնդակին չէի հասնում, իմ խնդիրն էր մրցակցին վախեցնել, ստիպել նրան սխալվելու՝ դուրս գալով դարպասից: Եվ Կոխը սխալվեց՝ գնդակով հարվածելով ինձ: Չեմ հասկանում, թե մրցավարը որտեղից հնարեց իմ կողմից ձեռքով խաղը:

- Քո կարծիքով, ինչպիսի՞ն էր ուժերի իրական հարաբերությունը:

- Մենք ուժ ունեինք հաղթելու մրցակցին, հավատում էինք հաջողությանը: Սկզբում որոշ սխալներ թույլ տվեցինք փոխանցումներում, սակայն ասիճանաբար հարմարվեցինք անսովոր մթնոլորտին: Զգում էինք, որ գերազանցում ենք մրցակցին: Մենք արժանի էինք խմբում 2-րդ տեղը գրավելու:

- Ինչո՞վ կբացատրես նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավականների հաջող ելույթները: Բացի Ռուսաստանից եւ Ուկրաինայից, Եվրո-2012-ում հնարավոր է, որ խաղա նաեւ էստոնիան:

- Տպագրվում է, որ ԽՍՀՄ-ի փլուզումը նպաստեց նախկին հանրապետություններում ֆուտբոլի զարգացմանը: Ճիշտ է, առաջընթացին հարկ եղավ 20 տարի սպասել: Հայաստանում ֆուտբոլի վերելքը նոր է սկսվում:

- Ինչի՞ մասին կցանկանայիր խոսել ՈՒԵՖԱ-ի ղեկավարների հետ:

- Այն մասին, որ վաղուց ժամանակն է կիրառել կրկնապատկերները վիճելի իրադարձությունների ժամանակ: Դա մրցավարից շատ ժամանակ չի պահանջի: Դուբլինում մրցավարի թույլ տված սխալը ոչ միայն ազդեց հանդիպման արդյունքի, այլ մարդկանց ճակատագրերի վրա:

- Շարունակելո՞ւ ես ելույթներդ հավաքականում:

- Տաք գլխով այժմ չեմ ցանկանում այդ մասին խոսել: Մենք շատ լավ հավաքական ունենք ու կցանկանայի շարունակել խաղալ: Սակայն պարզ չէ, թե առջեւում ինձ ինչ է սպասում:

- Առաջիկայում քեզ սպասում է 2014-ին Բրազիլիայում կայանալիք աշխարհի առաջնությունը:

- Շատ համարձակ կանխատեսում է: Իհարկե, ցնցող կլիներ: Չեմ բացառում, որ այդպես էլ կլինի: Սակայն ներկայումս իմ կարիերայում անորոշություն է: «Խիմկիում» գործերը լավ չեն ընթանում: Բաց թողած գոլերի քանակով մենք առաջատարների թվում ենք: Նման պայմաններում ցանկացած դարպասապահ կհուսալքվի: Պետք է խոսեմ «Խիմկիի» ղեկավարության հետ, քանի որ պայմանագրի ժամկետը լրանում է մրցաշրջանի ավարտին:

- Ամեն դեպքում, ե՞րբ ես որոշել վերջնական վճիռ կայացնել հավաքականի հարցում:

- Ամռանը կկողմնորոշվեմ: Տեսնենք, թե ինչպես կդասավորվեն գործերս «Խիմկիում»:

Օլիմպիական համալսարանում կուսանեն նաեւ Հայաստանի պատվիրակները

Պեկինում, օլիմպիական խաղերի բացման օրը՝ 2008 թ. օգոստոսի 8-ին, համատեղ հուշագիր էին ստորագրել ՌԴ վարչապետ Վլ. Պուտինը եւ ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն: Առիթը Ռուսաստանի միջազգային օլիմպիական համալսարանի հիմնադրումն էր: Ժակ Ռոգեի խոսքերով Ռուսաստանի նորաստեղծ բուհը «աշխարհը կդարձնի գեղեցիկ»:

Համալսարանի նպատակը սպորտի արհեստավարժ ղեկավար կադրեր պատրաստելն է: Աշխարհում, մասնավորապես ԱՊՀ երկրներում մեծապես անհրաժեշտ է ունենալ մարզական բնագավառում առաջատար մասնագետներ, որոնք կկարողանան ղեկավարել ժամանակակից կառույցները: Նոր մեխանիզմների ստեղծումը խիստ անհրաժեշտ է սպորտում եւ այդ խնդրին լուծում կտա աշխարհում իր տեսակով եզակի ռուսաստանյան նորաստեղծ բուհը: Նրա ղեկավարությունը առաջին պայմանագիրը կնքել է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի հետ, Սոչիում՝ այս տարվա փետրվարին: Փաստի մասին հիշեց եւ հաճույքով խոսեց բուհի գլխավոր տնօրեն, պրոֆեսոր Լեւ Բելոուսովը: Նրա գլխավորած պատվիրակության հետ հայ գործընկերները համաժողով կազմակերպեցին Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում:

ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանի ողջույնի խոսքից հետո ուշագրավ ելույթներ ունեցան բնագավառի հեղինակավոր գիտնականներն ու մասնագետները: Առաջիկայում Հայաստանն իր առաջին պատվիրակներին ուսանելու կգործուղի ռուսական համալսարան:

ՀԱԽՄԱՏ

Հուշամրցաշարը մեկնարկեց արագ շախմատի մրցախաղերով

Ռուս հանրահայտ շախմատիստ Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարը սկսվեց արագ շախմատի մրցախաղերով: Սանկտ Պետերբուրգում մեկնարկած մրցաշարի մասնակիցների թվում են Հայաստանի մի քանի ներկայացուցիչներ: Մրցումների առաջին օրն անցկացված 5 տուրից հետո հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Զավեն Անդրեասյանն ու Հովիկ Հայրապետյանը, որոնք վաստակել են 3-ական միավոր:

Զավենը մրցաշարը սկսեց Գենադի Ագեյչենկոյի եւ Եվգենի Կալեգինի նկատմամբ տոնած հաղթանակներով, ապա հաշտություն կնքեց Անդրեյ Ռիչագովի եւ Վալերի Պոպովի հետ, իսկ 5-րդ տուրում պարտվեց Վլադիմիր Եմիշինին: Հովիկը հաղթել է Մախիմ Պոլովչենյային, Ռոստիսլավ Իվանովին եւ Վիկտոր Մանինին, պարտվել է Նիկիտա Մայորովին ու Վլադիմիր Եմիշինին: 1,5 միավոր է վաստակել Մարկ Բաստենչյանը, մեկ միավոր ունի Վլադիմիր Պողոսյանը:

5 միավորով առաջատարն Իգոր Կուռնոսովն է, որից կես միավորով են հետ մնում Անտոն Կորոբովը, Բորիս Սավչենկոն եւ Պավել Մալեշինը:

Յուրա Մովսիսյանը խորհրդանշական հավաքականում է

Գերմանական հանրահայտ «Բիլդ» հանդեսը հրապարակել է Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի արդյունքներով Եվրոպայի խորհրդանշական հավաքականի կազմը: Վերջինիս կազմում ընդգրկվել է Հայաստանի հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանը: Նա ընտրական մրցաշարում անցկացրած 9 հանդիպումներում դարձել է 4 գոլի եւ գոլային 5 փոխանցման հեղինակ: Հետաքրքրական է, որ հարձակվողներից Յուրան բոլորից շատ գոլային փոխանցում է կատարել: Հարձակման եռյակը կազմել են նաեւ Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի ռմբարկու, հոլանդացի Կլաս Յան Հունտելարը (12 գոլ) եւ գերմանացի Միրոսլավ Կլոզեն (9):

Լավագույն դարպասապահ է ճանաչվել Գերմանիայի հավաքականի դարպասի պահապան Մանուել Նոյերը, որը 10 խաղում 7 գոլ է բաց թողել: Պաշտպանական եռյակը կազմել են հույն Վասիլիս Տորոսիդիսը, ֆրանսիացի Ադիլ Ռամին եւ իսպանացի Սերխիո Ռամոսը: Կիսապաշտպաններն են պորտուգալացի Նանին, էստոնացի Կոնստանտին Վասիլեւը, գերմանացի Մեսութ Օզիլը եւ շվեդ Սեբաստիան Լարսոնը:

ՀՖԲ-ն բողոքարկել է մրցավարի վճիռը

ՀՖԲ նախագահ Ռուբեն Հայրապետյանը Facebook-ի իր էջում տեղեկացրել է, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես բողոքարկել է իսպանացի մրցավար Իսուրալդե Գոնսալեսի սխալ վճիռը, որն ազդել է հանդիպման արդյունքի վրա: ՀՖԲ նախագահը մրցավարին տգեղ է անվանել, միաժամանակ նշելով, որ իրեն հիչ է հետաքրքրում, թե իսպանացուն ինչպես կպատժեն: Ռուբեն Հայրապետյանն ավելի շատ մտահոգված է Ռոման Բերեզովսկու կարմիր քարտը չեղյալ համարելու խնդրով:

Ռուբեն Հայրապետյանը համաձայն չէ այն կարծիքին, թե մրցավարն ՈՒԵՖԱ-ի ղեկավարության պատվերն է կատարել: Նա ֆուտբոլասերներին կոչ է արել չհավատալ այդ լուրերին, նշելով, որ Պլատինին այն մարդը չէ, որ իրեն նման արարք թույլ տար: ՀՖԲ նախագահը նաեւ շնորհակալություն է հայտնել հավաքականի ֆուտբոլիստներին ու ֆուտբոլասերներին՝ խոստանալով տարեվերջին բարձր մակարդակով կազմակերպել հավաքականի անդամների մեծարումը:

Իռլանդիան կմրցի էստոնացիների հետ

Երեկ Լեհաստանի Կրակով քաղաքում կայացավ Եվրո-2012-ի անցումային խաղերի մասնակիցների վիճակահանությունը: Նախապես 8 հավաքականները բաշխվել էին 2 զամբյուղում: Վիճակահանության արդյունքում Իռլանդիայի հավաքականին բաժին հասավ էստոնիայի ընտրանին, որի ելույթներն ամենամեծ անակնկալներից մեկն էին ընտրական մրցաշարում: Մյուս զույգերը կազմեցին Թուրքիան ու Խորվաթիան, Չեխիան ու Չեռնոգորիան, Բոսնիան ու Պորտուգալիան:

Առաջին հանդիպումները կկայանան նոյեմբերի 11-12-ին, պատասխան խաղերը տեղի կունենան նոյեմբերի 15-ին:

«Ոսկե ոտքի» դափնեկիրը Ռայան Գիգզն է

Մոնակոյում կայացավ «Ոսկե ոտք» մրցանակաբաշխությունը: Այդ մրցանակն ամեն տարի հանձնվում է համաշխարհային ֆուտբոլում զգալի ավանդ ներդրած 29 տարեկանից բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստին: Այս անգամ մրցանակի դափնեկիր դարձավ անգլիական «Մանչեսթր Յունայթեդի» կիսապաշտպան Ռայան Գիգզը: Նա իր ոտնաթաթի հետքը թողեց Մոնակոյում ստեղծված համաշխարհային ֆուտբոլի «աստղերի» ծառուղում:

«Ոսկե ոտք» մրցանակը հիմնվել է 2003-ին: Մրցանակի առաջին դափնեկիրն իտալացի Ռոբերտո Բաջիոն էր: Հետագա տարիներին այն հանձնվել է Պավել Նեդվեդին, Անդրեյ Շեւչենկոյին, Ռոնալդոյին, Ալեսանդրո դել Պիերոյին, Ռոբերտո Կառլոսին, Ռոնալդինյոյին եւ Ֆրանչեսկո Տոտիին:

Բացի Գիգզից, այս տարի մրցանակի հավակնորդների թվում էին նաեւ Դեւիդ Բեքհեմը, Զանլուիջի Բուֆոնը, Դիդիե Դրոգբան, Սամուել Էտո'Օ-ն, Իկեր Կասիլյասը, Խավիեր Զանետին եւ Կառլես Պույոլը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հեռվերով

Սա էլ՝ «մտավորականը»

Երբ հռադարակվեց Սոս Սարգսյանի «նամակ» ադրբեջանցի մտավորականին, կասկած չունեի, որ Բաքուն մի «պատասխան» հորինելու է: Եվ առիթը չուշացավ. «Մոսկվայում ինձ ասում են՝ լռիր, թե չէ կսպանեն: Բայց ես հայերից չեմ վախենում: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հանդեպ ես երկակի վերաբերմունք ունեմ: Քանի որ Ղարաբաղը ոչ միայն տարածք է, այլեւ բնակչություն: Եթե ադրբեջանցիները վերադառնան Ղարաբաղ, ապա Բաքու կվերադառնան հայերն ու կպահանջեն իրենց բնակարանները՝ դիմելով եվրոպական դատարաններին: Նրանք դա կարող են: Իսկ ահա եթե Ադրբեջանը Ղարաբաղը վերադարձներ իր բանակի ուժով, դա ուրիշ բան կլիներ»,- ասել է Ռուսամ Իբրահիմբեկովը:

Եվ հենց դա էլ ապացուցում է, որ Սոս Սարգսյանն իրավացի է, երբ ասում է, որ ոհմակի մեջ ապրողը պիտի ժանիք ունենա: Ի՞նչ վատ բան է տեսնում Իբրահիմբեկովը, եթե «ադրբեջանցիները վերադառնան Ղարաբաղ, իսկ հայերը՝ Բաքու»: Պարզվում է, նա վախենում է, որ հայերը կպահանջեն իրենց բնակարանները: Այսինքն, նրանք կպահանջեն Բաքվում ապրելու եւ ադրբեջանական կառավարությունից փոխհատուցում եւ անվտանգության երաշխիքներ ունենալու իրենց իրավունքի իրացում: Իսկ դա «մտավորական» Իբրահիմբեկովի «ճաշակով չէ»: Ի դեպ, մի մարդու, որ մի քանի տարի առաջ ափսոսանքով ասել էր, որ «Բաքուն կորցրել է իր վաղեմի դեմքը»: Հավանաբար, դրա համար նրան խիստ «քթակել» են: Այնքան, որ Բաքու հյուրախաղերի գալով, Իբրահիմբեկովը որոշել է հասարակությանը ներկայանալ «քաջարի զինվոր Շվեյկի» կերպարով եւ «ոչ» ասել ԼՂ խնդրի խաղաղ կարգավորմանը: Ենթատեքստն այն է, որ «ինչո՞ւ գնալ դրան, եթե Ղարաբաղը ոչ միայն տարածք է, այլեւ՝ բնակչություն»: Այսինքն, «ինչո՞ւ համաձայնել, որ Ղարաբաղում հայեր ապրեն, թող Ադրբեջանն այդ հարցը լուծի բանակի ուժով, որպեսզի այնտեղ ոչ մի հայ չմնա, այ դա կլինի լուծում»:

Ադրբեջանցիներն այսպիսի մի խոսք ունեն. «Երբ ժողովուրդը գժվում է, մոլլայի մոտ խորհրդի է գնում, բա որ մոլլան գժվի, ո՞ւմ մոտ գնա»: Հիմա Իբրահիմբեկովն է. մարդիկ նրանից խելքը գլխին առաջարկություն են ակնկալում, սա էլ իրեն «գժի» տեղ է դրել եւ խորհուրդ է տալիս խաղաղությունից ձեռք քաշել, գնալ եւ «բանակի ուժով վերադարձնել Ղարաբաղը»: Որպեսզի ինքը Մոսկվայում լավ զգա:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Քանջարեղենը կօգնի սրտին եւ անոթներին

Ճիշտ սնվելը կարող է առողջացնել մարդու սիրտը, նույնիսկ եթե ծագումնաբանորեն նա մեծ չափով հակված է ունենալու սրանոթային հիվանդություններ: Դա բացահայտել է միջազգային գիտնականների խումբը, որը Մեծ Բրիտանիայում աշխատում էր Մակգիլ եւ Մակմասթեր համալսարանների աշխատակիցների ղեկավարությամբ: Այդ մասին հաղորդում է The Gazette թերթը:

Հետազոտությունների ընթացքում փորձագետները ուսումնասիրել են էթնիկական 5 խմբեր ներկայացնող 27 հազար անձանց առողջական վիճակը: Դա թույլ է տվել բացահայտել սրտի հիվանդությունների զարգացմանն առնչվող 9p21 գենի տարածված տարբերակի եւ առողջ սննդի դրական հատկանիշների կապը:

Այսպիսով, ծագումնաբանական կանխատրամադրվածությունը կարելի է շրջանցել շատ բանջարեղեն եւ միրգ ուտելու դեպքում, մեկնաբանում են մասնագետները: Հում բանջարեղենը հաջողության բանալին է: Պրոֆեսոր Սոնի Անանդի խոսքերով՝ խորհուրդ է տրվում օրական ուտել 2-4 բաժին բանջարեղեն: Այդ դեպքում սրտանոթային հիվանդությունների վտանգը փաստորեն կարող է չեզոքանալ:

9p21 գենն առկա է մարդկանց մոտավորապես 75 տոկոսի օրգանիզմում: Դրա երկու օրինակի առկայության դեպքում սրտի նոպայի վտանգն ավելանում է 70 տոկոսով, մեկ օրինակի դեպքում՝ 30 տոկոսով: Հետազոտության ընթացքում գիտնականները հաշվարկեցին, որ ամենից վատ սնված եւ գենի երկու օրինակ ունեցող մարդկանց սրտամկանի ինֆարկտի վտանգը կրկնակի մեծ է մյուսների համեմատությամբ: Սակայն առողջ սնունդը թույլ տվեց նվազագույնի հասցնել վտանգը:

Պ. Ք.

Ցավակցություն

«Ֆլեշ» ընկերության ղեկավարությունը խորապես վշտակցում է Աբովյանի էլեկտրացանցի պետ Վալերի Գևորգյանին՝ սիրելի կնոջ՝

ԱՇԽԵՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ և ցավակցում նրա ընտանիքի անդամներին, հարազատներին ու մտերիմներին:

Ցավակցություն

Հայաստանի ԳԹԿ կոլեկտիվը ցավակցում է իր աշխատակից Նարեկ Գևորգյանին՝ սիրելի մոր՝

ԱՇԽԵՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ և վշտակցում հանգուցյալի ընտանիքի անդամներին ու հարազատներին:

Ցավակցություն

«Արարատբանկի» կոլեկտիվը ցավակցում է իր աշխատակցուհի Մանե Գևորգյանին՝ սիրելի մոր՝

ԱՇԽԵՆԻ

անժամանակ մահվան կապակցությամբ և կիսում նրա ընտանիքի անդամների խոր վիշտը:

Ցավակցություն

Ուսանողական ընկերները ցավակցում են Վալերի Գևորգյանին՝ սիրելի կնոջ՝

ԱՇԽԵՆԻ

վաղաժամ մահվան կապակցությամբ և խորապես վշտակցում իրենց ընկերոջն ու նրա ընտանիքի անդամներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀՈՑ-ԲԸՊՁԲ-11/2

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել գեներատորային լամպերի մատակարարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու գեներատորային լամպերի մատակարարումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով, մինչև 2011 թվականի նոյեմբերի 20-ի ժամը 12:00-ն: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձևով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը անվճար տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հրավերի թղթային տարբերակը հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով, մինչև 2011 թվականի նոյեմբերի 20-ի ժամը 12:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է՝ հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է Գնումների աջակցման կենտրոնե ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

Ձեւ N 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 31/12/10

	ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» ՍՊԸ
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	
Պետական ռեգիստրում գրանցման համարը	5103000023
Հարկ վճարողի հաշվառման համարը	04102865
Չափի միավորը	Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ հեռախոսը (+374 238) 44685
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ՀՀ,Արարատի մարզ, գ. Արմաշ հեռախոսը

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	1,231,948	1,379,476
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	20,431	413,464
Ոչ նյութական ակտիվներ	030	494	485
Բաժնետիրական կապիտալում մեթոդով հաշվառվող ներդրումներ	040	18,600	-
Հետաձգված հարկային ակտիվներ	060	89,619	218,966
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	1,361,092	2,012,391
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	2,613,490	2,298,744
Անավարտ արտադրություն	120	27,282	188,732
Արտադրանք	130	540,854	361,695
Ապրանքներ	140	251,964	135,084
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	3,369,362	2,196,798
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	782,532	1,080,240
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	579,204	444,902
Այլ դեբիտորական պարտքեր	180	-	466
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	343,802	756,689
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	3,042	3,830
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	8,511,532	7,467,180
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	9,872,624	9,479,571

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	6,525,000	6,525,000
Կուտակված շահույթ	270	721,365	743,233
Պահուստային կապիտալ	280	7,000	7,000
Ընդամենը սեփական կապիտալ	300	7,253,365	7,275,233
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	389,435	-
Կարճաժամկետ փոխառություններ	380	1,006,566	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	1,031,490	568,954
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	186,718	1,626,694
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	569	688
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	4,481	8,002
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	2,619,259	2,204,338
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	9,872,624	9,479,571

Ղեկավար Նիկողոսյան Գ. Մ.

Գլխավոր հաշվապահ Վարդանյան Ա. Ա.

Ձեւ N 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01/01/10-31/12/10

Տուգանիքի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոդական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամորոդական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	10 527 748	16,444,199
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(10 008 167)	(15,951,309)
Համախառն շահույթ (վնաս)	030	519 581	492,890
Իրացման ծախսեր	040	(53 245)	(103,308)
Վարչական ծախսեր	050	(107 109)	(99,127)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	359 227	290,455
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	29 888	5,366
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(10 122)	(61,896)
Գործառնական շահույթ (վնաս)	090	378 993	233,925
Ֆինանսական ծախսեր	100	(122 532)	(92,253)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	392 774	(80,606)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	649 235	61,066
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	649 235	61,066
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	(53 706)	(39,198)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	595 529	21,868

Ղեկավար Նիկողոսյան Գ. Մ.

Գլխավոր հաշվապահ Վարդանյան Ա. Ա.

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Մանանա Գրեյն» ՍՊԸ-ի մասնակիցներին
22 հունիս 2011թ.

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Մանանա Գրեյն» ՍՊԸ-ի (հետագայում՝ Ընկերություն) կից հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի շարժի եւ դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեսթային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը եւ բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2011 թ., ինչպես նաեւ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, կապիտալի շարժի եւ դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքի եւ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սպոնսորագրուած է տպագրութեան՝13.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաճար» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: